Զ. ՏԱՐԻ　ԹԻՒ 1,677　Կ. ՊՈԼԻՍ. 1902, ՄԱՐՏ 29—11 ԱՊՐԻԼ　2 ՄՈՒՀԱՐՐԷՄ, 1320 — 29 ՄԱՐԹ 1318　ՈՒՐԲԱԹ

بوزانتيون
ارمنیجه یومی وسیاسی غزته. صاحب امتیاز و مدیر مسؤلی
بوزانت کچیان
مطبعه و اداره خانه سی باب عالی جاده سنده ۲۳-۲۵ نومرو ده
دائرۂ مخصوصه ده در

ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆԳԻՆ
Բոլոր [պոլսոյ] 12 ղր.
ՏԱՐԵԿԱՆ » » 7 Մէճ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ 36 Ֆր.
ՎԵՑԱՄՍ. 18 ԵՌԱՄՍ. 9 Ֆր.
ԱՆԳԼ. ԼԻՐԱ 119 ղրշ. — 20 ՖՐ. ՆԱՊ.
94 1/2 ղրշ. — ՔՐԻՍԹԻՆ 55 ղրշ.

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ　ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ　ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԳԻՆ 6 Մէճ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ » 3 »
ԵՌԱՄՍԵԱՅ » 1 1/2 »
ՁԵՌԱԳԻՐ ԳՈՐԾԵՐԸ 20 Փարա
[illegible]

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Երբ երկաթուղիներու զարգացումով Թուրքիոյ ընդարձակ և բարեբեր երկրի անտեսական վիճակն յեղաշրջման շրջանի մէջ կ'մտնէ, երկրագործական գիտութիւններու պէտքն անհրաժեշտ կը դառնայ: Մինչև հիմա մեր երկրացիներ իրենց զանազան բերքերն հնաւուրց փոխադրելու դիւրին և չահաւէտ միջոցներէց համեմատաբար զուրկ էին: Մեր հնաւանդ մեթոտով, երկրագործութիւնը գրեթէ տեղական առօրեայ պէտքերուն միայն յատկացած, պէտք և պահանջ մը չի կար երկրին բերքերը բազմապատկելու: Սակայն այսպէս ըլլալու չէ ասկէց վերջ:

Երկաթուղին նոր ցնցում մը պիտի տայ այդ դանդաղ և յամրընթաց գործերին, սպառում և տրամադրութիւններ պիտի սուղցնեն տեղական բերքերի ինկած արժէքն և պիտի բազմապատկուին անոնց քանակութիւնը: Բայց ի՞նչպէս: — Մեր հին նահապետական գութանո՞վ, եզան ու գոմէշի քայլերո՞վ: — Ստորին Հոլանտայից և Զուիցերիայից աւելի հարուստ մեր արօտատեղերի մէջ արածող, բայց ազնուացման և ընտրականութեան (sélection) միջոցներից զուրկ կովերի և ոչխարների տուածնե՞րով պիտի հայթայթենք կաթ, պանիր, կարագ, միս և բուրդ, որակով և արժէքով կարենալ մրցելու համար ներմուծուած նոյնատեսակ բաների հետ: Չէ՞ որ օրական սօտ 40 լիտր կաթ տուող հոլանտական կովեր ինքնին չի բուսան, այլ յատուկ մեթոտներով և անխոնջ յարատեւութիւնով ազնուացան և կատարելագործուեցան: Մինչև 6-700 քիլօ կշռող այս հսկայ եզները և կովերու պատուական միսն արդիւնք է տեղական պայմաններու հետ նոյն այդ ազնուացումին և ընտրականութեան: Ո՞վ եթէ առիթ ունեցեր է՝ օգանչանքով չէ դիտած Պուլոնէզի, Բէրշըռօնի և այլ ցեղերի հսկայ, ուժեղ, բռնաքարշ ձիերը, 1 մէտր և 60-70 հարիւրորդամէտր բարձրութեամբ, զօրեղ անդամներով օժտուած, որք նոյնպէս երկարժամանակեայ տոկուն և յամառ ընտրականութեան, տարազուդութեան (croisement) հետեւանքներով զարգացած և ազնուացած են:

Այս և նմանօրինակ բաներ վաղն իսկ պահանջք մը պիտի դառնան: Կը խորհի՞նք անոնց վրայ: Գուցէ ուրիշներ մտածեն թէ մեզ չի մնար ուրիշ բան եթէ ոչ փոխադրել և բազմացնել օր. համար, հոլանտական կովերէց ընտիր Ֆրիզեանը, բռնաքարշ Պուլոնէզը և մեծաքաշ, երկարամազ Մէրինօսը: — Ատոնք չարաչար կ'սխալին, մեզ պարտաւոր ենք ուսումնասիրել Եւրոպացիներու գործածած մեթոտներն և ցեղերի ազնուացման օրէնքներն որք յատուկ գիտութիւն մը կ'կազմեն այսօր: Առնենք նորից հոլանտական, զուիցերիական կովերը: Ասոնք, իրենց տեղին, կլիմային և ուտեստին վարժուած, ուրիշ տեղ փոխադրուելով բոլորովին կ'կորցնեն իրենց ընտիր յատկութիւնները:

Երկրագործական մեքենաներու հրաշալի արդիւնքները քաջածանօթ են, կատարելագործուած գութաններով այսօր ընդարձակ հողեր կ'վարեն, աւելի նպաստաւոր պայմաններով, կ'ցանեն ցանիչ մեքենաներով, առնուազ 1/3 սերմնացու աւելի խնայողութիւնով և աճելու աւելի յարմար վիճակի մէջ. կ'քաղեն, կ'հնձեն մեքենաներով, արագ ու դիւրին: Հասարակ քաղիչ մեքենաներ օրական երկու ձիով և 1—2 մարդով կարող են հնձել 3 հէկտարէն աւելի (*) խոտ և անկէ աւելի հունձք: Իսկ քաղող և կապող մեքենաներով կ'քաղեն 4—5 հէկտար տեղ: Այս մեքենաներ չատ չանցած մեր երկրին ներսերը պիտի մտնեն անխուսափելի կերպով: Ժամանակին հետ չքալողն ետ պիտի մնայ: Վերջի հիասթափութիւն ոչնչի պիտի ծառայէ, պէտք է հասկնալ որ պիտի անցնին երթան այն ժամանակի օրերն որ 1—2 եզով, քանի մը այծերով և քանի մը կտոր հողերով, մեր երկրացիք հանգիստ կ'ապրէին և հանդերձեալը կ'մտածէին: Այժմ ատուբեան անողոք և անհրաժեշտ մրցումը պիտի ընկճէ զանոնք: Երկրին բարեբեր հողերէն զատ, անմշակելի համարուածներն անգամ արուեստական բարեխառնութիւններով և քիմիական ու պարարտութիւններու միջոցով բազմապատիկ հրաշալի արդիւնքներ պիտի տան, երկրին հողերն այլեւս պարապ և հանգիստ պիտի չմնան ինչպէս կ'ըլլան հիմակ:

— Ի՞նչ կ'անենք այս ամէնի հանդէպ: Հսկայական Թուրքիոյ գերազանց երկրագործական երկիր մը ըլլալու հանգամանքն և մասնաւորաբար Հայերու ստուար մեծամասնութեան երկրագործ ըլլալուն, զարմանալի չի՞ թուիր որ մեր ազգ. ուսումն. վարչութիւնն երբեք կարծես հարկ չէ զգացել, Լուսիկի գեղածիծաղ ափերից, գէթ մասնաւորապէս գաւառական և վանական դպրոցների համար չինած և կազմած ծրագիրների մէջ կարեւոր և պարտաւորիչ տեղ մը տալ երկրագործական զանազան ուսումներին, չի նայած որ գաւառների մէջ ամէն ազգային, ըլլայ վաճառական, սեղանաւոր կամ պաշտօնեայ, սերտիւ կապուած է երկրագործին և անոր աշխատութիւններին, մինչ ատար հակառակ, մանուկ ուղեղին մէջ բազմաթիւ վերացական առարկաներ լեցնել աւելորդ չեն համարած: Ժամանակ է որ մեր դպրոցների ղեկավարող մարմիններ օգտային սատանութիւններէն, քչիկ մ'էլ հողին երես իջնալու և կեանքի իրական մասերի հետ չփուելու բարեհաճութիւն ունենան և աշակերտներին ամէն բանից առաջ դրական գիտութիւններով կրթեն, որպէսզի անոնք կարող ըլլան առաջին առթով իսկ օգտուիլ և օգտեցնել երկիրը: Անշուշտ մեզ չենք անտեսեր գիտական բարձր ուսումներու անհրաժեշտութիւնը, բայց հարկ է կրկնել որ ատոնք բարձր. վարժարանների վերապահեալ են: Մեր հասարակ ծխական վարժարանների ծրագիրը ծանրաբեռնելով և մեր մատաղ սերունդն աննպատակ և վնասակար յոգնութիւններու մատնելով, յամառ կամք պահանջող աշխատութիւններին խուսափող և հիւանդ ու աննաստատ մարդեր կ'պատրաստենք միայն:

Երկրագործական գիտութիւններու ծանօթութիւններ անհրաժեշտ են և անոնց դասաւանդութիւններ՝ աւելի կամ նուազ գործնական օրինակներու հետ մեծապէս օգտակար պիտի ըլլան: Սակայն ովքե՞ր պիտի ուսուցանեն այդ կարեւոր գիտութեան բազմակողմանի ճիւղերը: Մեր ուսուցիչներ այդ բանին պատրաստուած չեն. իսկ աշխատասէրներ ուսանելու գացողներին ստուար մեծամասնութիւն՝ չասելու համար ամբողջութիւն՝ բժշկութիւն ուսանելու գացեր են, վերջէն Պոլիս հաստատուելու համար: Քանի՞ս մտքերնին կ'անցընեն երկրագործ, անտառաբան, կաթնատնտես, գինեգործ, հանքաբան, մեքենագէտ են. ըլլալ, չէ՞ որ անոնք հասարակ, ինկած դասակարգի աշխատութիւններ պիտի ըլլային, հեշտաւէտ կեանքի հեռանկարէն և ամբողջ հրապուրիչ տիրողութէն զուրկ: Սակայն ատենն եկել է որ ազգ. ուսումն. վարչութիւնն երկրագործական զանազան ճիւղերի մասնագէտ ուսուցիչներ պատրաստելու հոգ տանի:

*** Փափաքողներին դիւրութիւն մ'ընծայելու նպատակով, քանի մը տեղեկութիւններ կուտանք Նանսիի երկրագործական կարեւոր հաստատութիւններու վրայ:

1. [illegible] գործնական աշխատութիւններով (Ecole pratique d'Agriculture Mathieu de Doubasle de Tomblaine, près Nancy). — Ունի երկու տարւոյ դասընթացք, գիշերօթիկ և ցերեկեայ, առաւօտեայ ժամեր նուիրուած են երկր. զանազան ճիւղերի, չատ կանոնաւոր կերպով աւանդուած, նշանաւոր բրոֆէսօրներէ ձեռքով: Կէսօրից յետ 3-5 ժամ, գործնական աշխատութիւններ, դաշտային պարտէզի, այգեգործական, ագարակի ներքին և կաթնատնտեսական բաժանմունքներով: Դպրոցն ունի 50-60 հէկտար հող և մարգագետիններ, և վերջի մեթոտներով կատարելագործեալ բազմաթիւ մեքենաներ: Ձիերի, եզների և կաթնատու լաւագոյն տեսակ կովերի և մաս մը խոզերի խնամածութեան, մաքրութեան, ուրաքանչիւրի իրենց յատկացեալ նպատակների համեմատ կերակրումի եւն. գործերին կ'մասնակցին մեծ մասով աշակերտներ, մանաւանդ ձմեռը: Պարտէզի աշխատութիւններ բաժանուած են բանջարեղէնի, ծաղիկների և պտղատու ծառերի կանխապատրաստութեան: Պատուաստի, մեղուաբուծութեան և հաւաբուծութեան ճիւղեր ալ կան: Դպրոցը փորձերի յատկացուած հողաբաժին մ'ունի զանազան տեսակ տեղական և օտար բոյսերի ազնուացման համար: Կ'աւանդուին Երկրագործութեան ընդհ. ճիւղեր, երկրագործական մեքենաների գործածութիւն, հողաչափութիւն և հարթաչափութիւն (Topographie et Nivellement), երկրագործական տնտեսագիտութիւն, երկրագործական օրէնքներ, երկրագործական հանքաբանութիւն, ընտանի կենդանիներ պահել և ազնուացնել (Zootechnie) երկրագործական քիմիա (հողերի պատրաստութիւն և պարարտացում, նոյնպէս կենդանիների սնուցում և պահպանութիւն) երկրագործական և կաթնատնտեսական արուեստագիտութիւն (technologie agricole):

2. [illegible] (Ecole Nationale des Eaux et Forêts. Nancy). Ֆրանսայի նմանօրինակ հաստատութիւններու ամէնէն բարձրն և կազմակերպեալը, երկու տարի շրջանով, գիշերօթիկ և ցերեկեայ: Օտարազգիներ հոն մտնել ուզող Ֆրանսացիներու դժուարին մրցումներին չեն ենթարկուիր: Աշակերտներու արդէն զարգացած լինելու հետեւանքով, դպրոցին դասաւանդութիւնները չատ խճողուած չեն. հարկաւոր է նախապէս բարձր մաթեմաթիկ և երկր. գիտութիւններու բաւական ծանօթութիւն: Ընդարձակ տեղ մը տրուած է անտառներ հասցնելու գործնական աշխատութիւններին և միւսինոյն նպատակով ուղեւորութիւններ, Ֆրանսայի զանազան մասերի և մասնաւորապէս ֆրանսական և զուիցերիական Ալպեանց մէջ: Կ'աւանդուին անտառաբանութիւն, անտառ. արհեստագիտութիւն և հովուական մշակութիւն (Culture Pastorale). դասերից դուրս նաեւ երկրաչափութեան և հարթաչափութեան տեսական և գործնական դասեր կան, նաեւ անտառաբանական հանքաբանութիւն, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, օրէնսգիտութիւն:

[illegible] (Institut Agricole de la Faculté des Sciences.—Enseignement supér. Agronomique de Nancy). Մէկ տարիէ ի վեր հաստատուած և չատ ընտիր այժերով կազմակերպուած: Մեծ ապագայ կը խոստանայ, նպատակ ունենալով ուսանողներին պատրաստել երկրագործական և բնական գիտութիւններու, նոյն ասպարէզին ուսուցչութեան հետամտողներու համար: Գործնական մասը թէ' լաբօրաթուարի (տարրալուծական և մանրադիտային) և թէ մասամբ մը զանազան հաստատութիւններու այցելութիւններից կ'բաղկանայ: Հոս յաճախողները սա' առաւելութիւնն ունին որ իրենց Համալսարանի դասերից դուրս ամէն դիւրութիւններ ունին հետեւելու նաեւ վերոյիշեալ երկու վարժարանների կարգ մը տեսական և գործնական աշխատութիւններին, իբրեւ ազատ ունկնդիրներ: Շրջանը նոյնպէս երկու տարի է: Յատուկ ուշադրութիւն կ'տրուի նաեւ բոյսերի, հողերի և կենդանիների ազնուացման ծանօթութիւններին և անոնց սպառնալող կենդանական և բուսային հիւանդութիւններու դէմ մաքառելու ամենակարեւոր ուսումնասիրութիւններին:

Մ. Ն.

Նանսի.

(*) — Մէկ հէկտար = 10,000 քառակուսի մէտր տարածութիւն:

ԷՋՄԻԱԾՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՏՓՂԻՍ, Մարտ 10.

Բարեկամներից մէկը Երեւանից մի նամակ է ստացել, լի տխուր բովանդակութեամբ: Էջմիածնի աւանդական կարգերն են խօսում այս նամակի մէջ իրանց ընորոշ, աչք ծակող գոյներով:

Բարեկամիս բարեհաճ թոյլատւութեամբ օգտվում եմ այդ նամակից:

Էջմիածնի Ղազարապատ կոչված հին հիւրանոցում վախճանվում է Թիֆլիսի գրական շրջաններին ոչ անծանօթ ակնեցի Յովսէփ Ճանիկեանը: Մահը տեղի է ունենում բարեկենդանի օրերում (ճիշդ Թուականը բացակայում է նամակում): Այս մահը իր պարագաներով մի անգամ էլ գալիս է ապացուցանելու վանական քարասրտութիւնն ու անխղճութիւնը:

Յովսէփ Ճանիկեանը վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ Ակնի ներկայացուցիչն ընտրուեր էր ժողովում: Այդ ընտրութիւններից յետոյ նա այլ եւս բախտ չունեցաւ տեսնել իր հայրենակիցներին, ընտանիքը: Նա երբեմն Էջմիածնում էր անցկացնում օրերը, կարճ ժամանակ վարելով Թիւրքերէն լեզուի ուսուցչութեան պաշտօնը ճեմարանում, իսկ մեծ մասամբ ապրում էր Թիֆլիսում, առանձնացած: Այդ ակամայ տարագրութեան ծանրութիւնը չքաւորութեան մէջ և դառնութիւնը միայնութեան մէջ սփոփում էր գրական զբաղմունքով: Նրանն է «Հնութիւնք Ակնայ» եկեղ. բանասիրական կարեւոր աշխատութիւնը, որ արժանացաւ Իզմիրեանց մրցանակին:

Նրա միակ զբօսանքի ժամանակն էր ցերեկվայ ժամը 12-1-ը, երբ իջնում էր Մթածմինդայի բարձունքից դէպ ի «Սալդատսկի» բազարի ճաշարանը, ուր համեստ ճաշում էր մշակների հետ միասին, ապա մի կտոր հաց կապելով իր Թաշկինակի մէջ, ցուպը ձեռքին բարձրանում էր կրկին դէպ ի Մթածմինդա: Նա ֆիզիքապէս արագ սպառվում էր, կմախք էր ներկայացնում միայն: Վերջերս բաւական ժամանակ է նա այլ եւս չէր երեւում, վերոյիշեալ նամակը լուծեց իմ հետաքրքրութիւնը:

Ճանիկեանը, ինչպէս ասացի, մեռնում է Ղազարապատում: Վանքի և ճեմարանի վեղարաւորներից ոչ ոք նրա մօտ չէ մտնում, նոյն իսկ հիւրընկալ Գրիգորիս վարդապետը մի «հոգւոյ» ղրկում է նրան, այլ կանչում է գիւղից մի քահանայ, ննջեցեալին դնում է աղբ Թափող սայլի վրայ եւ յանձնում է քահանային, որ տանի թաղէ: Ո՛չ տիրացու, ո՛չ ժամկոչ. օգտագործի Յովհաննէսը, չարժված Իշխան տեղի քարասրտութիւնից եւ ղեւտական իրականութիւնից, ներկայանում է միակ յուղարկաւորողը գժբաղդ պանդուխտի: Ճանիկեանին հողին են յանձնում գիւղի գերեզմանատան այն յետ ընկած տեղում, որ կոչվում է ղարիբանոց: Մակայն երբէք Էջմիածնում և Վաղարշապատում ոչ մի գաղթական, նոյն իսկ թափառաշրջիկ մուրացկան այնպէս անշուք չէ թաղվել: Լսում են ճեմարանի ուսուցիչներից ոմանք և զայրանում են, որ հնաւորութիւն չեն ունեցել վերջին յարգանքը մատուցանելու, իրանց երբեմնեան պաշտօնակցին եւ ժողովրդական գրողին: Ապա չարժում է եւ վանքի անշարժ, քարացած միաբանութիւնը, այնու ամենայնիւ չէ գտնվում իսկական մեղաւորը, որովհետեւ ոչ ոք արդար չէ եղել: Յայտնի է, որ Ղազարապատում ոչ ոք չէ ընդունվում առանց Կաթողիկոսի գիտութեան եւ թոյլտուութեան, Իսկոյն իմաց է տրվում նրան եւ մեկնողների մասին: Երբ բացակայում է Կաթողիկոսը, հիւրընկալ վարդապետը հարկաւոր դիմումներն անում է եւ հաչիւ է տալիս Ղազարապատ հիւրանոցի մասին տեղակալին:

Մ. — ՔԱՀԱՆԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԻԺԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Ճանապարհորդութեանս միջոցին հանդիպեցի, ի միջի այլոց, Շուլավէրի գաւառում գտնուած Ազքեօրփու հայաբնակ գիւղը: Բոլոր գիւղացիների մէջ մի այնպիսի համակրելի սէր և միութիւն կայ, որի նմանը դժուար թէ գտնուի մեր միւս գիւղերում: Ընթերցողներին կ'ծանօթացնեմ այդ գիւղի հասարակութեան մէջ տեղի ունեցած մի դէպքի հետ, որը մի արտասովոր, մի նմուշ է կազմում այդ գիւղացիների միմեանց հետ ունեցած սիրոյ և միութեան: Տեղացի գիւղացիներից մէկը սովորութիւն է ունեցել մարդկանց մականուն դնել: Հասարակութիւնը դրա՛ մի քանի անգամ զգուշացնելուց յետոյ երբ տեսնում է որ նա չէ ուղղվում և չարունակում է մարդկանց անուանարկել, հետեւեալ միջոցին է դիմում: Բոլոր գիւղացիները խորհուրդ են կազմում և վճռում են, որ ոչ ոք այդ մարդու հետ յարաբերութիւն չունենայ, և որ գլխաւորն է, չխօսէ: Այդպէս էլ արել են: Այդ անգամէ վճռի հիման վրայ, նրա որդիքն անգամ իրաւունք չունէին իրենց ծնողի հետ նիստ ու կաց անելու, խօսելու: Խեղճերը (սկզբից բաժանուած էին հօրից) ստիպուած էին գիւղերները մէկ-մէկ գաղտնի կերպով այցելելու ծնողին, որ հասարակութեան միջից դատապարտուած էր այդպիսի խիստ բարոյական տանջանքի:

Եւ ես այդ բոլորն անձամբ տեսայ: Բայց եթէ գիւղացիներից որ և է մէկը չէ՞ ուղէր սահմանուած անողոք վճռից, յարաբերութիւն ունենար յանցաւորի հետ, նա առաջին անգամ կ'ենթարկուէր տասնեակ րուբլիների տուգանքի, իսկ երբ այդ կրկին նկատուէր, նա անպայման դուրս պէտք է վտարուէր գիւղից: Այդպիսի խիստ պատժից յետոյ յանցաւորը մեղայ է տալիս, խոստանում է ուղղուել, ուրիշներին այլ եւս չվիրաւորել: Բայց նրա խնդիրը չէ ընդունւում, որովհետեւ մէկ ամիս միջոց էր որոշուած: Պէտք էր այդպէս չարունակուէր մինչեւ պայմանաժամի լրանալը: Եւ երբ տեսնէին, որ իսկապէս նա ուղղուել է, խելօքացել է, այն ժամանակ միայն այդ անողոք վճիռը կ'քանդուէր, իսկ եթէ ոչ անպատճառ նրան դուրս կ'անէին իրենց գիւղից: Այդ պատժուողը չատ ուրախ կ'լինէր, ինչպէս ասում էին գիւղացիները, որ իրեն մէկ ամիս չարունակ ծեծէին, քան թէ այդ կերպ պատժէին: Մի ուրիչ նոյնանման օրինակ եւս նոյն գիւղում կատարուող խրատմունքներից: Բարոյապէս պատժուած էր և այդ տեղ գտնուած մի ընտանիք, բայց չգիտեմ ինչի համար, չասեցին: Ահա ինչպէս էին պատժել: Ազքեօրփու գիւղում մի աղբիւր կայ: Թէ մարդիկ և թէ անասունները դրանից են օգտւում: Գիւղում բաց ի այդ աղբիւրից այլ ջուր չկայ: Այդ ընտանիքին որոշ ժամանակով խստիւ արգելուած էր միակ աղբիւրից ջուր վերցնել: Իսկ եթէ վերցնէր, այն ժամանակ կ'ենթարկուէր նոյն պայմաններին, որոնք նշանակուած էին վերևում յիշուած առաջին յանցաւորի համար: Ապա ի՞նչ անէր խեղճ ընտանիքը: Առանց ջուրի ինչպէս ապրէր: Գիւղից մի քանի մղոն հեռաւորութեան վրայ աղբիւրներ կան: Իբրեւ պատիժ յիշեալ ընտանիքի անդամներն ամէն օր ստիպուած էին ոտքով գնալ այն տեղից ջուր բերելու: Ահա ի՛նչ է նշանակում բարոյական պատիժ: Սէրը և միութիւնը գիտեն յանցաւորին պատժել այնպէս, ինչպէս հարկաւորն է: Եւ ինձ ասացին, որ այդ գիւղում երբեք կռիւներ չեն լինում, ինչպէս ուրիշ գիւղերում: Երբ մէկը միւսին մի կերպ վիրաւորում է, իսկոյն հասարակական դատի են դիմում, և մեղաւորը ենթարկւում է հասարակութեան որոշած բարոյական պատժի: Ազքեօրփուեցիք լաւ են հասկացել բարոյական պատժի նշանակութիւնը:

Մեր միւս գիւղերը թող օրինակ վերցնեն Ազքեօրփու գիւղից:

Ուխեան.　Վ. Ն. Դ.

ՈՍԿԵՀԱՆՔԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Թան իր սեղանատրական բաժնին չաբաթական տեսութեան մէջ հետեւեալը կ'գրէ. — «Հարաւային Ափրիկէի մէջ այս պահուս սկսուած բանակցութիւնք յաջող ելքի մը պիտի յանգի՞ն: Այս հարցումը կ'ըլլայ չաբաթէ մ'ի վեր ոսկեհանքերու հրապարակին վրայ, և Սակտրանի մարդիկն ասով կ'զբաղին և չահագործութեան առիթ կ'ընեն զայն: Որովհետեւ իրաց սրդի վիճակին մէջ այս հարցման կարելի չէ ո և է պատասխան տալ, հանքաթուղթերուն գիներն ալ միշտ անստուգութեան մէջ կ'տարուբերին: Ելան կամ ինկան, օրուան կարծիքներուն համեմատ: Բայց վերջապէս անոնք որ այժ առած էին երբ իմացուեցաւ թէ Պօէր պատուիրակները Բրեթորիա գացած են եւ անկէ Լորտ Քիչնէրի հաւանութեամբ անգլիական գիծերը ճեղքելով Օրանժ կ'երթան Պօէր զօրավարներուն հետ հաշտութեան մասին խորհրդակցելու, անո՛նք ալ թուլցան, վհատեցան, տեսնելով որ հարաւ—ափրիկեան հեռագիրներ իրենց կարծիքին հաստատող լուր մը չի բերեր: Հետեւաբար իրենց յանձնառութիւններէն ետ կեցան և հաչիւնին մաքրեցին: Եւ զարմանալի չէ որ այս պատճառաւ գիներն ինկան: Սակայն ոսկեհանքերու արժէթղթոց սօտէն հետեւողները չեն կարծեր որ չատ մեծ անկում առաջ գայ գիներուն վրայ, եթէ բանակցութիւնք խզուին վերջ ի վերջոյ: Նոյն արժէթղթոց վերջին բարձրացման պատճառն էր գլխաւորաբար ոսկեհանքերու մէջ աշխատութեանց վերսկսումը, ինչ որ կ'չարունակուի այսօր ալ: Զարգըրըմը քիչ մը ինկաւ Մր. Ռօտսի մահուան անմիջական հետեւանօք, բայց կ'ըսուի թէ Մր. Աէսիլ Ռօտսի պիտի յաջորդէ Մր. Պէյդ իբրեւ նախագահ Զարգըրըմի Վարչական Խորհրդոյ: Կ'ըսուի թէ Տէ Պիէրս ընկերութեան նախագահութիւնն ալ պիտի առաջարկուի Լորտ Ռոչիլտի:»

ԿՈՎԿԱՍԵՑԻ ԴԱՇՆԱԿԱՀԱՐԸ

ՏԻԿԻՆ ՀԱՆՐԻ ԿՐԷՎԷԼ

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

(39) ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ԱՌՆՈՒԱԾ

ԺԴ.

Աշխոյն ատեն, Նախախնամութենէն կ'ստանար այս փոքրիկ հատուցումները զոր կ'ընդունէր ժպտուն երախտագիտութեամբ: Երբ Արտեան սալօն մտաւ, տեսաւ որ Կոմսուհին հագուեր չքուեր էր: — Ծաչէն ետքը դո՞ւրս պիտի ելնէք, հարցուց:

= Ամենքի՛ն: Ձեզի համար հագուեցայ: Այսօր առանձին ենք:

Այնքան գոհ էր որ չկրցաւ չժպտիլ: — Աս ի՞նչ է, ըսաւ Արտեան, տասն և հինգ տարու կ'նմանիք:

= Պատճառն այն է որ երջանկութիւնս նորափթիթ է ա՛յնքան, ըսաւ Մար' Իվաննա սիրավառ կնոջ այն մըն ալյոնարներէն միով, որք վարձատրութիւնն կամ պատիժն են սիրողին, անոր լաւ կամ յոռի տրամադրութեան մէջ ըլլալուն համեմատ: Արտեան այդ ժպիտն իր լաւ իմաստովը ըմբռնեց: Զիրենք միացնող տարօրինակ պայմանին երկարատեւութեան չէր հաւատար բնաւ: Կինները ճանչցած ըլլալով, գիտէր թէ այդպիսի դաշինք մը քանի մը չաբաթէ աւելի չի կրնար տեւել: Ետոյ, դիպուած մը, կանխամտածուած կամ ո՛չ, իրեն պիտի տար Մար' Իվաննան, կ'բաւէր որ համբերութիւն ունենար անճահօրէն չխրտչեցնելու զայն: Եթէ դիպուածն այդ օր պատահէր, աւելի՛ աղէկ: Սեղանապետն եկաւ ճաշին պատրաստ ըլլալը ծանուցանելու: Կոմսուհին Արտեանի թեւը մտաւ սիրելով խաղ ձեւացնող մանկան մը պէս ժպտելով: Երիտասարդը կ'սեղմէր այս արձանական թեւը, բայց չատ մեղմով, գրեթէ անզգալիօրէն: Մար' Իվաննա առանց ճիգ ընելու քաչեց թեւն իր աթոռին քով երթալէ առաջ, և նշան ըրաւ ընկերոջը՝ նստիլ: Առած էր ծանրաչուք դէմք մը որ քիչ մը վախցուց Սիրիլը: Առաջադրեց աւելի խոհեմ ըլլալ այնուհետեւ: Ծաչի կատակերգութիւնը չատ կ'ձանձրացնէր զիրենք: Երկուքն ալ կուշտ էին, և ծառաներուն հանդիսական երթեւեկէն կ'զայրանային: Մար' Իվաննա հաստատուն կեցած էր սակայն: Աշխարհիկ կեանքի վարժուած ըլլալով, կ'գտնէր խօսակցութեան նիւթեր, որք միշտ կ'նորոգուէին, վասն զի Արտեան կ'ընմիջէր զանոնք: — Չէ՞ք կրնար ճամբել սա մարդը, որ ձեր ետին կեցած է, ըսաւ յանկարծ: Իր անխռով դէմքէն չեմ ախորժիր:

= Անկարելի՛ է, պատասխանեց ժպտելով: Իմ վաղեմի մայրիս ծառայ է: Պիտի կարծէ թէ չնորհազուրկ եղած է:

— Ծիշտ ձեր մայրիկն ըլլալուն համար է որ իր ակնարկն անհաճոյ կ'երեւայ ինծի: Հետաքրքրական կենդանիի մը պէս կ'քննէ զիս:

= Ձեզ սիրուն գտնելուն համար է, ըսաւ Մար' Իվաննա արցունք թափելու աստիճան խնդալով:

Այնքան լաւ տրամադրութեան մէջ էր որ ամէն բան զըօսալի կ'երեւար իրեն: Սիրիլ, ակամայ վարակուեցաւ այս անմեղ զուարթութեամբ, և ճաշն աւարտեցաւ աւելի լաւ քան որչափ սկսած էր: Երբ պզտիկ սալօնը դարձան, Մար' Իվաննա աթոռակի մը վրայ նստաւ, սենեկին մէջտեղը, քիչ մ'առաջ ծեծեց և երեսը նայեցաւ անոր զոր կ'սիրէր արտայայտ ուրախութեամբ մը: — Ի՞նչ հարկ ու հարսնիք մեզ համար, ըսաւ Կոմսուհին: Տեսէ՛ք, այս անակնկալ վայելքին ի պատիւ, մարդ ղրկեցի նոր վարդեր բերել տալու:

Արդարեւ, Կավրիլ եկաւ՝ բերելով բիւրեղէ անօթ մը, ուր կ'փթթէին հիանալի ծաղիկներ: Սեղանին վրայ դրաւ ու դուրս ելաւ: — Ձե՞րն են, բարեկա՛մ, ըսաւ Մար' Իվաննա: Հատ մը տուէ՛ք ինծի:

Արտեան, մատները վտանգելով, վարդ մը զատեց և ընծայեց Կոմսուհիին, որ կիսաբաց չփակին մէջ դրաւ զայն: — Փափկանկատ ուշադրութիւններ ունիք, ըսաւ Արտեան, բայց չէ՞ք վախնար որ այս մարդուկը, ձեր սիրելին, կ'պատմէ Կոմսին...:

= Թէ վա՛րդ գնել տուի իրեն:

— Ո՛չ, ըսաւ Սիրիլ քիչ մը անհամբեր, թէ իմ անունիս պնակային մէջ դրած էք.... Վերջապէս, սա դրամին խնդիրը:

= Է՛, ի՞նչ կ'ընէ ատիկէ:

Արտեան անոր երեսը նայեցաւ առանց համենալու: — Հոգս չէ թէ ըրածներս կ'իմանայ Կոմսը: Եթէ գիտնար, պիտի չհակառակէր: Ես չատ աւելի մեծ գումարներ ծախսած եմ բազմիցս անօգուտ յիմարութիւններու, և օգտակար բանի մը համար վատած եմ Կոմսին հաւանութիւնն ստանալու: Եթէ խնդրէի որ ինծ ընէ, պիտի փութար հնազանդիլ ինծի, բայց կ'ուզեմ որ ես ինքս ընեմ, և մեր միջեւ մնայ, վասն զի աս աւելի սիրուն է: Ահա այսչափ:

Կոմսուհին Արտեանի երեսը նայեցաւ համաձակ և անստուերօրէն պայծառ աչքերով: Երիտասարդը չլացաւ ու նեղացաւ միանգամայն: — Բարեգործութի՛ւն մը, ըսաւ, իր հպարտութեան վիրաւորուելն յայտնելով այսպէս:

= Սիրտս կ'նեղացնէք, Սիրի՛լ Բէգրովիչ, ըսաւ Կոմսուհին ոտք ելնելով:

Երկու քայլ առաւ և կանակը դարձուց Արտեանի, որ հասկցաւ թէ նախատած էր զայն: — Ներեցէ՛ք, Մար' Իվաննա, կ'աղաչեմ, ըսաւ անոր մօտենալով: Զղջալին ու դիւրագրգիռ եմ: Շատ գէչ բնաւորութիւն մ'ունիմ: Առաջուընէ կ'իմացնեմ ձեզի:

(Շար.)　Թարգմ. Փ. — ՇԻՐԱԿԱՑԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ՊԱՏԵՐԱԶՄԸ.— Կռուող Պօէրներուն Թիւը. — Բրեթորիայէ հեռագրուած անգլիական Տեղեկագիր.— «Թշնամիին ուժերուն վրայ խնամով կատարուած հաշիւ մը կ'ցուցնէ թէ դեռ կռուող դաշտերուն վրայ կան 8,000 հոգի, որք ցրուած են Զուդբանսպէրկէ մինչև Սըթըրլէնտ (հիւսիսէն հարաւ), և Կարբէզէ մինչև Բիէդ Րէդիֆ (արևմուտքէն արևելք։) Ամէնէն աւելի կռուող ունի Տըլարէյ, որ Քէնմի հետ գրեթէ 900 հոգիէ բաղկացեալ պօէրախումբ մը կ'պահէ Բլերքստորբ — Լիխտընպէրկ — Մէֆքինկ—Վրիպուրկ գծին միջև։ Վօլմարանստատի արևմտեան և հիւսիսային կողմը, Տըլարէյէն ոչ շատ հեռի, կան դեռ Բօդկիդէր 100 հոգւով, Քլասէն 200 հոգւով, և Քրօնէէ 100 հոգւով։ Ուրիշ փոքր պօէրախումբերն ալ հաշուելով, ասոնք ընդամէնը կ'ընեն 1,900 հոգի։ Վան տէր Մէրվէ 100 հոգւով կ'գտնուի արևմտեան Թրանսվալի մէջ երկաթուղիէն քիչ մը անդին դէպ արևմուտք։ Պէյէրս 400 հոգւով Զուդբանսպէրկի հարաւային կողմերը կ'շրջի։ Վիլժօէն, Միւլլէր, Դիրքսըն և ուրիշ քանի մը պետեր ալ Լիտէնպուրկի շուրջ կ'թափառին, գրեթէ անգործ։ Կեդրոնական Թրանսվալի մէջ, Վօկ Մէյէր փոքր պօէրախմբի մը հետ պահուըտած է Վալի, Բօշէֆսդրումի, Յօհաննէսպուրկի և Վէրէնիկէնկի եռանկեան մէջ։ Արևելեան Թրանսվալի մէջ, Ալպէրդս, Օբբէրման և Վան Նիքէրք, 400 հոգւով, Սբրինկսի արևելեան և Պէթէլի հիւսիսային կողմն են։ Քլասէն 100 հոգւով և Պաուէնհորստ 100 հոգւով, Էրմէլոյի մէջ են, և Պրէտէնպախ 200 հոգի ունի Բիէդ Րէդիֆի մօտ։ Դալով Օրանժի, անոր հիւսիսային արևելեան մասը բոլորովին մաքրուած է Պօէրներէն վերջին համախումբ գործողութեանց հետեւանօք։ Ռոս, Վանքօլէր և Հ. Պոթա (ոչ թէ Լուի Պոթա) 300 հոգւով իրենց ժամանակը կ'անցընեն պահըտելով և յոգնեցնելով անգլիական զօրագունդերը։ Պրանդ, սակաւաձեռն գունդով մը Զաստրօն գաւառակին մէջ է, մինչ Քրիւ կ'գտնուի Ֆիքսպուրկի արևմտեան կողմը, և Նաքոյս 150 հոգւով Պրանտվադէր հովտին մէջ։ Բարխլայսոյ գաղթավայրին մէջ թշնամիին ուժերը շատ ցրուած են։ Պարզապէս իրենց ժամանակը կ'անցընեն յոգնեցնելով մեր զօրագունդերը, և առիթի մը կ'սպասեն անձնատուր ըլլալու։ Մալան թողլով իր հին ասպարէզը, Պուրկէրստորբի արևելակողմը, դէպ ի հարաւ քալած է, անցնելով երկաթուղոյ երկու գիծերէն, և հիմա կը գտնուի Մըրրէսպուրկի հիւսիսային կողմը, ուր իրեն միացած է Ֆուշէ։ Ապստամբներուն գլխաւոր մասը կը գտնուի Օրանժ գետի և Պօֆոր բերդին արևմտակողմը։ Ամէնէն խոշոր պօէրախումբը, հրամանատարութեամբ Մօրիցի և Պուէրի, 250 հոգի, կ'մնայ Կարբէզի մօտակայքը։ Թէրոն 200 հոգւով Զաք գետին վրայ կ'սպասէ, Բալվինիայի հիւսիսային կողմը։ Սըթըրլէնտի եւ Ֆրազէնպուրկի միջև կան երեք փոքր խումբեր, մինչ Վան Րէնան, 100 հոգւով, անոնցմէ քիչ մը անդին է։ Ճիշտ ասոնցմէ դէպ ի հիւսիս կ'սպասեն Լադէկան, Քօնրոյ և Ս. Պոթա։ Դժուար է ըմբռնել թէ ո՞րքան անագնատարած միջոցի մը վրայ սփռուած են ապստամբք և թշնամիք։»

*** Վերոգրեալ տեղեկութիւններն հաղորդող անգլիացի թղթակիցը չի յիշատակեր բնաւ զԼուի Պոթա և զՏէվէդ, բայց ... That is the question!

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՔ. — Քրօնստատէ (Օրանժ) կ'հեռագրուի որ, թէև Մ. Շալք Պիւրկըր հաղորդակցութեան մտած է Մ. Շդէյնի հետ, որ զօրավար Տըլարէյի հետ կ'գտնուի, բայց բանակցութիւնք շատ առաջ գացած չեն, բանակցողներուն իրարմէ շատ հեռի գտնուելնուն պատճառաւ։ Թրանսվալցի պատուիրակներն ուրիշ կեդրոն մը պիտի ընտրեն բանակցութիւնները դիւրացնելու համար։ Յայտնի չէ թէ զօրավար Տէվէդ Մ. Շդէյնի քո՞վն է թէ ոչ։

*** Ինչպէս հեռագիրը ծանոյց, անցեալ օր ի Բրեզորիա հպատակութեան երդում ընողներուն մէջ կայ նաև Քրիւկէր նախագահին անդրանիկ որդին, Գասպար Քրիւկէր։

*** Ներկայ տարւոյ առաջին երկու ամիսներուն ի Թրանսվալ ներածեալ վաճառքներուն արժէքն է 1 միլիոն 223,888 սթերլին ընդդէմ 244,181 սթերլինի անցեալ տարուան նոյն շրջանին։ Վերջին երկու ամիսներուն մաքսային հասոյթք 130,037 սթերլին եղած են։

ՔԱՆԱՏԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ.—Տըլարէյի հետ վերջին կռուոյն մէջ, անգլիական զօրագունդին Քանատական ջոկատն արիաբար պատերազմեցաւ, մինչև որ ամէնքը կա՛մ սպաննուեցան կամ վիրաւորուեցան։ Մր. Զէմպրլէն հետեւեալ հեռագիրը ղրկեց Քանատայի կառավարիչ Լորտ Մինդոյի.—«Կ'շնորհաւորեմ զՔանատա՝ Տըլարէյի հետ կռուոյն մէջ քանատացի հրացանակիրներուն դիւցազնական ընթացքին համար։ Խորապէս կ'ցաւիմ ծանր կորուստներուն վրայ, և սրտագին ցաւակցութիւնս կ'յայտնեմ ընտանիքներուն և ազգականներուն, անոնց որք իրենց կեանքը վրայ տուին Քանատական արիութեան աւանդութիւնները պահպանելու համար։» Լորտ Մինդօ Քանատական հրացանակիրներուն հրամատար սպային հեռագրեց.—«Ի սրտէ կ'շնորհաւորեմ Քանատացի զօրաց փայլուն յաջողութիւնները։ Խորապէս կ'ցաւիմ անոնց կորուստին վրայ։»

ՆՈՐ ԶԷԼԱՆՏԱՅԻ կառավարութիւնն որոշեց բնիկ Մաօրիներն ի զէն կոչել իբրև կամաւոր։ Կ'յուսացուի թէ վեց ամսուան մէջ մինչև 5,000 Մաօրի պիտի զինուորագրուին Հարաւային Աֆրիկէի համար։

*** Նորահաս անգլիական սթէրլիններով լեցուն գեղեցիկ քսակ մը տրուեցաւ վարչապետ Մր. Սէտընի (ըստ անգլիական գործնական սովորութեան), ի վարձ իր ծառայութեանց պօէրական պատերազմին առթիւ։

ԱՒՍՏՐԱԼԻԱՑԻ ՍՊԱՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ.—Հասարակապետութեան վարչապետ Մր. Պարդըն յայտարարեց թէ Պօէր գերիներն հրացանի բռնող աւստրալիացի սպայք իրաւամբ յանցաւոր էին, և Լորտ Քիչնէր չէր կրնար զանց ընել արժանաւոր պատիժը։ Իրողութիւնն իր բոլոր մանրամասնութեամբ հրատարակուած ըլլալով, Մէլպուրնի մէջ հասարակաց կարծիքն ալ այն է թէ Հէնտքօք և Մօրէնդ սպաններն իրենց արժանաւոր պատիժը կրած են միայն։

ՊՕԷՐԱՍԷՐՔ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ.—Սիտնիի մէջ ալ պօէրական պատերազմին առթիւ պօէրասէր դաշնակցութիւն մը կազմուած է, և աղերսագիր մը կ'պատրաստուի Խորհրդարանին ներկայացնելու, խնդրելու համար որ Աւստրալիոյ Հասարակապետութիւնը դադրեցնէ Հարաւային Աֆրիկէ զօրք ղրկելը։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Պարսիկ կառավարութիւնը մենաշնորհ տուաւ անգլիացի հպատակի մը՝ Թէհրանէ հովտին քարիւղի հանքերը բանեցնելու։ «Նովոյէ Վրէմիա» ռուս թերթը կրակ կտրած է, յայտարարելով թէ անգլիացիք հարաւային արևմտեան Պարսկաստանի մէջ քարիւղի ճարտարարուեստը զարգացնելով, վտանգաւոր մրցում մը պիտի բանան Ռուսիոյ քարիւղի ընկերութեանց դէմ, և Պարսկաստանի մէջ պիտի զօրացնեն Ռուսիոյ հակառակ ազդեցութիւնները։ «Պարսկաստանի մէջ Ռուսիոյ քաղաքականութիւնը պէտք է ըլլայ, կ'ըսէ, այդ երկիրը պաշտպանել օտար տարրերուն տնտեսական ձեռնարկութեանց խուժելէն»։ Անգլիապարսիկ հեռագրական համաձայնութիւնն յանկարծակիի բերաւ Ռուսները, հիմակ ալ քարիւղի մենաշնորհին վրայ իրար անցած են։ Կը վախնան որ եթէ անգլիական դրամատէրներուն ձեռքն անցնին այսպէս զանազան մենաշնորհներ հարաւային արևմտեան Պարսկաստանի մէջ, ռուս դիւանագիտութիւնը պիտի չկրնայ այլ ևս ազդեցութիւն բանեցնել ի Պարսկաստան։

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ.— Իտալական ջուրերուն մէջ Աւստրիոյ նաւատորմին երևնալը քաղաքական մեծ նշանակութիւն կ'տրուի ի Հռոմ, իբրև նշան երկու երկիրներուն կատարեալ համաձայնութեան և բարեկամութեան։ Իտալիա Ֆրանսայի հետ համաձայնելէն վերջ կ'աշխատի կատարեալ համաձայնութեան մը գալ նաև իր զինակիցներուն՝ Աւստրիոյ եւ Գերմանիոյ հետ։ Վիեննայի կէս պաշտօնական թերթ մը, «Ողջոյններ Իտալիայէ» վերնագրով խմբագրականի մը մէջ կ'ըսէ.—«Բարեկամական ողջոյններ կ'հասնին մեզ Իտալիայէ ա՛յն պահուն երբ աւստրիական դրօշը կ'ծածանի իտալական ջուրերուն մէջ և ծովակալ Ռիբէր հանդիսաւոր ընդունելութեան կ'ընդունուի Վիքթոր Էմմանուէլ Թագաւորէն։ Որքան ալ զանազան դժուար խնդիրներ առժամապէս կարծիքի տարբերութիւններ առաջ բերած են Իտալիոյ և Աւստրիոյ մէջ, սակայն մեր սիրտերուն խորը միշտ համակրութիւն մը կայ այդ հիանալի կերպով գեղեցիկ երկրին (Իտալիա) համար։ Ո՛րքան քաղաքական խնդիրներ, որոց լուծումն անկարելի կ'թուէր երբեմն, լուծուեցան այսօր երկու Տէրութեանց գոհացուցիչ եղանակաւ։»

ՌՈՒՍԻԱ.— Ելմտական նախարար Մ. Վիդդէ ռուսական նաւաշինութեան ճարտարարուեստին ոյժ տալու համար, որոշած է ամէն միջոց ի գործ դնել։ Նախարարը կ'առաջարկէ Ռուսիոյ մէջ և ռուսական երկաթներով շինուած մէն մի առաջնակարգ շոգենաւի ծախքին կէսը փոխ տալ նաւատիրոջ կամ մասնաւոր նաւարանին տիրոջ, պայմանաւ որ մինչև 20 տարի կամաց կամաց կառավարութեան վճարուի փոխ տրուած գումարը։ Բաց աստի, նախարարը կը խոստանայ այդ կերպով շինուած շոգենաւերուն արժէքին երկու երրորդն ապահովագրել տարեկան հարիւրին 2 ամէնէն վար գնով։ Նաւատէրերն իրաւունք ունին մնացեալ երրորդ մասն ապահովագրելու մասնաւոր ընկերութիւններու։ Այսպիսի շոգենաւերու շնորհուած ուրիշ արտօնութիւն մ'ալ այն է որ կառավարութիւնը պիտի վճարէ վառելիքին կէսը՝ երբ շոգենաւերը ռուսական նաւահանգիստէ մը մեկնած ատեն իրենց տարողութեան երեք չորրորդը բեռնաւորուած ըլլան, կամ երբ իրենց բեռներուն կէսը ռուսական ուրիշ նաւահանգստի մը համար է։ Պետական Խորհրդոյ ներկայացուելէն առաջ, հրատարակութեան տրուեցաւ այս օրէնքը, որպէս զի շահ ունեցող անձինք ժամանակ ունենան օգտակար դիտողութիւններ ընելու։

*** Ծովային նախարարութիւնը կ'յայտարարէ թէ Խաղաղականի ռուս նաւաբաժնին հրամատարք սովորութիւն ըրած են շատ բարձր գիներով ճափոնական նաւահանգիստներէն գնել մեծաքանակ իրեղէններ, մինչ ծովային նախարարութիւնը մասնաւոր մթերքներ ունի ի Վլատիվոստոք և ի Բորդ Արթուր։ Օրինակ կ'բերէ ռուս հրամատարի մը արարքը, որով անցած տարի Նակազաքի նաւահանգիստէն 18 րուպլիի գնեց մէկ բուդ քարիւղը, մինչ Օտեսայի կամաւոր նաւատորմին վարչութիւնը նոյնչափ քարիւղը կ'գնէր 4 րուպլ 80 կոպէկի, և մինչ կրնար ռուսական յիշեալ նաւահանգիստներէն 1 րուպլ 65 կոպէկի և 2 րուպլ 35 կոպէկի գնել մէկ բուդ քարիւղը։ Նոյն հրամատար մեծաքանակ նպարեղէններ ալ գներ է վերջին ծայր սուղ գիներով ճափոնական նաւահանգիստներէն։ Հետեւաբար ծովային նախարարութիւնը խստիւ կ'արգիլէ ռուս հրամատարներուն օտար նաւահանգիստներէ չգնել, ո և է իրեղէն, որմէ կը գտնուի ռուսական նաւահանգիստներուն մէջ, և անոնց մէջ չգտնուած իրեղէն մ'ալ նաւաբաժնին ծովակալին հաւանութեամբ միայն պէտք է ուրիշ տեղէ գնել։ Ռուս մարտանաւերը իրենց ամբողջ ճամբորդութեան միջոցին բաւող նպարեղէնները պէտք է կարելի եղածին չափ բեռնաւորեն, Քրօնշդատի նաւահանգիստէն չմեկնած։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ.—Լուիզիանայի կառավարիչ Մր. Հիրտ նամակ գրելով Միացեալ Նահանգաց արտաքին գործոց պաշտօնատան, անոր ուշադրութիւնն հրաւիրած էր Նոր Օրլէանսի մօտ անգլիական բանակետղի մը վրայ, ուր յատուկ պաշտօնեաներ ոչ միայն ջորի և ուրիշ կենդանիներ կը գնէին Հարաւային Աֆրիկէի համար, այլ ամերիկացի կամաւորներ ալ կը զինուորագրէին, ինչ որ հակառակ է Միացեալ Նահանգաց չէզոքութեան։ Կառավարիչը կ'հարցնէ թէ Ռուզվէլդ նախագահ ի՞նչ պիտի ընէ ասոր դէմ։ Նախագահն արդէն ուղղակի քննութիւն բացած է, և միւս կողմէն ալ Ընդհ. դատախազ Մր. Նօքսի կարծիքն հարցուցած էր օրինական տեսակէտով։ Մր. Նօքս երկար ակադեմական պատասխան մը տուաւ։ Չէզոքութեան օրէնքը քննելով կ'յայտարարէ թէ օրէնքի հակառակ չէ պատերազմիկ Տէրութեան մը պատերազմական հայթայթումներու վաճառումը։ Խնդիրը մեծ հետաքրքրութիւն առաջ բերած է, և քննութիւնք առաջ կ'տարուին։

ՖՐԱՆՍԱ.—Մ. Բէլմանսօ, հռչակաւոր արմատական կուսակցապետ, որ 4 տարի չէր կրցած երեսփոխան վերընտրուիլ, այս անգամ ծերակոյտի անդամ ընտրուեցաւ Վառ նահանգին կողմէ 122ի դէմ 344 քուէով։

*** Մ. Արևելքի, Բօշէնշինի, Հնդկաց Ովկիանոսի և Խաղաղականի ֆրանսական նաւաբաժիններն այսուհետև ի մի պիտի ձուլուին և նաւային պատկառելի ոյժ մը պիտի կազմեն Արևելեան ծովերու ծառայութեան յատկացուելով։ Այս նաւաբաժինը պիտի բաղկանայ հզօր և արագընթաց մարտանաւերէ, որք մերթ ընդ մերթ Ֆրանսայէ պիտի մեկնին այցելելու զանազան նաւահանգիստներ և կէտեր, ուր Ֆրանսա քաղաքական և տնտեսական շահեր ունի։ Ատլանտեան ովկիանոսի ֆրանսական նաւաբաժինն ալ նոր փոփոխութիւններու պիտի ենթարկուի։

ԼԵՀՔ Ի ՌՈՒՍԻԱ.— Վիլնայի կաթոլիկ եպիսկոպոսին տարագրութեան առթիւ հետեւեալ նոր տեղեկութիւնները կ'հաղորդուին.—Ժվիրովից Գերապայծառ անցեալ շաբթու Բեդերսպուրկ կանչուեցաւ այն շրջաբերականին համար, որով իր թեմականներուն կ'արգիլէր իրենց զաւակները ղրկել ռուսական դպրոցները։ Կրօնից նախարարն ասոր վրայ հրաւիրեց եպիսկոպոսն որ կամաւ հրաժարի իր աթոռէն։ Այս պարագային, իրեն ամբողջովին պիտի վճարուէր իր տարեթոշակը, և պիտի արտօնուէր իր ուզած տեղը բնակիլ։ Ժվիրովից Գերապայծառ այս առաջարկութիւնը չընդունելով, տարագրուեցաւ ի Դվէր 2,500 րուպլ տարեթոշակով։

ՔԱԼԻՖՕՐՆԻՈՅ կաթոլիկ եպիսկոպոսին և Մեքսիկոյի կառավարութեան միջև մէկ միլիոն տոլարի դրամական խնդրոյ մը առթիւ ծագած վէճը Լահէյի իրաւարարական ատեանին պիտի յանձնուի, առաջարկութեամբ Մեքսիկայի ամերիկեան դեսպանին։

ՍԵՒ ԾՈՎՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ.— Վլատիկաւկասի Երկաթուղոյ Ընկերութիւնը սկսած է նոր գիծ մը շինել Սեւ ծովու կովկասական եզերքին երկայնքը։ Թուափս, Կակրի և Սոխում քաղաքներէն անցնելով, պիտի միանայ անդրկովկասեան գծին և մինչև Մայքոփ պիտի երթայ։ Նոր գծին երկայնութիւնը պիտի ըլլայ 340 մէդր, և շինութեան ծախք հաշուուած է 5 միլիոն 500,000 անգլ. ոսկի։

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ Յ'ԻՏԱԼԻԱ.— Սբեցիայի զինուորական դատարանը 20 տարուան տաժանակիր աքսորութեան դատապարտեց ի բացակայութեան Պօնաքորսի անուն նաւային սպայ մը, որ զինուորական թուղթեր և ամրոցներու յատակագծեր գողնալով փորձած էր ծախել օտար Տէրութեանց։ Յանցաւորը չձերբակալուելու համար արտասահման փախաւ, և ո՛ւր ըլլալն յայտնի չէ։

ԹԱՂՈՒՄ ԵՒ ԿՏԱԿ ՄՐ. ՌՈՏՍԻ.— Ռոտսի մարմինը Մադոբբօ փոխադրող մասնաւոր կառախումբը բոլոր կայարաններուն մէջ ընդունուեցաւ յարգանքով և սուգի արտայայտութիւններով։ Հազարաւորներ, մեծ մասամբ հոլանտացիք, պսակներ բերած էին և ուրիշ սուգի նշաններ։ Ուօրսէսդըր քաղաքը, որ Աֆրիքանտէրութեան գլխաւոր կեդրոնն է, յարգանքի և համակրութեան կեդրոնն ալ եղած էր Մր. Ռոտսի համար։ Քիմպըրլիի մէջ արտասովոր ոգեւորութիւն և սուգ կ'տիրէր Մր. Ռոտսի դագաղին անցնելու պահուն։ Ամբոխներուն առջեւ բոլոր պահապանները բաց կեցած էին։ Տէ Պէէրս ընկերութեան 2,000 գործաւորները կայարան երթալով իրենց ծաղիկներուն և զաւակներուն հետ դագաղին առջեւէն անցան, մինչ երաժշտախումբը մեռելական քայլերգը կ'զարնէր։ Մէֆքինկի կայարանն հաւաքուած էին 2,000 սպիտակամորթ և 7,000 բնիկներ երբ Մր. Ռոտսի մարմինն հոն հասաւ։

*** Մաթապէլէններու ցեղապետ (ինտունա) Ֆաքու հետեւեալ սրտաշարժ հեռագիրն ուղղեց Բարելուսոյ կառավարութեան և Օր. Ռոտսի.— «Գերեզմանին եզերքն հասած ծերունի մ'եմ։ Ուրախութեամբ պիտի մեռնէի գիտնալով որ զաւակներս և ժողովուրդս ապահով են Մր. Ռոտսի ձեռքին մէջ, որ հայրս և մայրս էր միանգամայն։ Այս յոյս վերցաւ ինձմէ և կ'զգամ որ արեւն ինծ համար մարը մտած է այլ ևս, յուսահատական վիշտերու մէջ ընկղմած եմ։»

*** Մ. Ռոտսի իշխանավայել կտակն օրուան խօսակցութեանց նիւթ է Եւրոպայի բոլոր մայրաքաղաքներուն մէջ, մանաւանդ Ամերիկայի և Գերմանիոյ մէջ, քանի որ Ռոտս գերման և ամերիկացի ուսանողներուն ալ մեծ բաժին մը հանած է իր կտակին մէջ։ Վիլհէլմ կայսր և Ռուզվէլդ նախագահ կտակի հոգաբարձուներուն գոհունակութիւն յայտնեցին այս առթիւ։ Բաւական խնդիր եղեր է թէ ինչո՞ւ Մր. Ռոտս 250ական լիրա կտակած է գերման ուսանողներուն, մինչ 300ական կտակած է ամերիկեան ուսանողներուն։ Ռոտսի բարեկամները կ'ըսեն թէ հանգուցեալն ամէն բան խորհելով ըրած է, ամերիկացի ուսանողները շատ հեռու տեղերէ պիտի գան, մինչ Գերմանիոյ եւ Անգլիոյ հեռաւորութիւնը մեծ բան մը չէ։ Մասնաւորներու եղած կտակները դեռ յայտնի չեն, որովհետեւ կտակին այդ յաւելուածական մասը դեռ Քէբդաուն կ'գտնուի։

*** Մր. Ռոտս իր կտակին մէջ բացորոշապէս յայտարարած ըլլալով թէ իր բնակութիւնն է ի Ռոտեսիա, խնդիր է թէ Անգլիոյ ելմտական նախարարը պիտի կրնա՞յ ժառանգութեան տուրք առնել անոր ստացուածքներէն։

*** Նիւ Եօրքի և Պերլինի մէջ փափաք կ'յայտնուի որ Օքսֆորտի համալսարանին ծրագրին մէջ արդի համալսարաններուն բարւոքումներն ըլլան, որովհետեւ, ինչպէս յայտնի է, Օքսֆորտ դեռ չեղած չէ իր աւանդութիւններէն, և ուսուցման գերմանական և ամերիկեան մեթոտները զանց ըրած է։ Որպէս զի գերմանացի և ամերիկացի ուսանողք օգտուին Մր. Ռոտսի կտակէն, հարկ է, կ'ըսուի, ծրագրի փոփոխութիւն ընել Օքսֆորտի մէջ։

*** Հռչակաւոր Մր. Էնտրիւ Քարնէկի կ'ըսէ.—«Մր. Ռոտսի կտակը, իրեն պէս, լայն, մեծհամարիկ և ներշնչող է։ Անգլիախօս ցեղերը պէտք է իրարու միանան։»

*** Ամերիկեան լրագիրներէն ոմանք կ'ըսեն թէ փոխանակ ամերիկացի ուսանողներ Անգլիա ղրկելու, Մր. Սէսիլ Ռոտս աւելի աղէկ գործած կ'ըլլար իր հարստութիւնը՝ անգլիացի ուսանողներ Ամերիկա ղրկելով։ Իսկ Գերմանիոյ մէջ աւելի գոհունակութիւն առթած է։

*** Սթանտըրտի թղթակիցը, որ Սէսիլ Ռոտսի մեռելական կառախմբին մէջ կ'գտնուէր, կ'հեռագրէ թէ Քիմպըրլիէ մեկնելու ատեն Ռոտսի կառախմբին վրայ աւելցան քանի մը զրահապատ վակոններ, և քանի մը լոքոմոտիվներ առաջուց ղրկուեցան, պօէրական յարձակումէ մը վախնալով։

*** Քէօլնիշէ Զայդունկ յայտարարելէ վերջ թէ Վիլհէլմ Բ. պատրաստութիւն ցոյց տուած է իրեն յանձնուած պաշտօնը կատարելու, կ'ըսէ.—«Մր. Ռոտս իր հարստութիւնը կը նուիրէ անոնց որք կ'փափաքին ուսանիլ իրենց անձերուն օգտակար ըլլալու համար։ Իր կենդանութեան տեսութիւններուն հաւատարիմ՝ կ'փափաքի Անգլիոյ մեծութիւնն առաջացնել դաստիարակութեամբ։ Լորտ Րօզպէրիի և իր երկրին միւս վարիչ միտքերուն պէս ինք ալ հասկցաւ թէ Անգլիա շատ բաներու մէջ ետ մնացած է և պէտք է բարձրանայ։»

ՆԻՒ ԵՕՐՔԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՆԵԱԿԸ.—Նոր շէնքին բացումը պիտի կատարուի Օգոստ.ին կամ Սեպտ.ին։ Հրաւէր պիտի ըլլայ Եւրոպայի բոլոր առեւտրական մարմիններուն ներկայացուցիչ ղրկել, բացման դէպքին մեծագոյն կարեւորութիւն մը տալու նպատակաւ։ Կէս պաշտօնական թղթակցութիւն ալ կ'ըլլայ այս միջոցիս Ուաշինկդընի և Լոնտոնի միջև՝ Անգլիոյ գահաժառանգին Նիւ Եօրք երթալուն համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԼԱՍՔՕՅԻ ԱՂԷՏԸ.— Անգլիոյ և Սկովտիոյ միջև Ֆուդպոլ գնդախաղի մրցման ատեն տեղի ունեցած արկածը, զոր հեռագիրը ծանոյց, ճշմարիտ աղէտք մը եղաւ։ 80,000 հոգի ներկայ էին դարաստանին մէջ, որուն զանազան կողմերը բարձրաւանդակներ շինուած էին հանդիսատեսներուն համար։ Մրցումին սկիզբն ամբոխը խռոտուած էր արդէն խաղացողներուն վերապահուած շրջափակին պատնէշները։ Խաղն ընդհատուեցաւ, և հետեւակ ու ձիաւոր ոստիկանութիւնը միջամտեց ամբոխը ցրուելու համար։ Հետաքրքիրներն այսպէս դէպ ի բարձրաւանդակները մղուելով ա՛յնքան ճնշեցին անոնց վրայ որ առաջին կարգերուն վրայ գտնուած հանդիսականք սկսան բողոքել, պոռալ, և նորինչ և ուրիշ առարկաներ նետել անոնց գլխուն։ Յանկարծ ամէնէն բարձր բաժին մէկ մասը փլաւ 20—25 մէտր երկայնութեան մը վրայ, և վրան գտնուող խեղճերը վար թափեցան փայտեայ և երկաթեայ սիւներուն և գերաններուն մէջտեղէն։ Հետեւանքն ահեղի եղաւ։ Փախչող փախչողի, և աղեխարշ ճիչեր ամէն կողմէ։ Առաջին վայրկենին մէկուն միտքէն չանցաւ օգնութեան փութալ եղկելիներուն որք գետնին վրայ փռուած էին մեռած, վիրաւորուած, կիսովի ջախջախուած, խառնխռուած, փլած բաժին բեկորներուն տակ։ Բայց քիչ յետոյ պաղարիւնութիւնն յաղթանակեց, և օգնութիւնն սկսաւ ամէն կողմէ։ Նախ և առաջ գտնուեցան երեք հոգի մեռած և հարիւրի չափ վիրաւոր։ Մրցման ներկայ եղող բազմութիւնն ա՛յնքան ահագին և ա՛յնքան կուռ էր որ այդ սարսափելի արկածը նախ անտես անցաւ։ Երբ հանդիսատեսք, որք իրենց բովանդակ ուշադրութիւնը մրցման տուած էին—որ մասնախմբին որոշմամբ չէր ընդհատուած դեռ — տեսան քանի մը վիրաւորներու փոխադրութիւնը, ենթադրեցին թէ թեթև և պարզ արկած մ'է, ինչպէս գրեթէ միշտ կ'պատահի մարզական այնպիսի համախմբութեանց մէջ։ Ականատեսները կ'ըսեն թէ անհնար սոսկալի տեսարան չէր կրնար ըլլալ, կարծես ճակատամարտի դաշտի մը փոխուած էր դարաստանը, զիրար կ'հրէին, իրարու կ'փաթթուէին։ Հակապատկերը սրտաճմլիկ էր, մէկ կողմէն վիրաւորներուն օրհասական աղաղակները, և անհուն շրջափակին միւս կէտերէն ծափեր կ'թնդային խաղացողներուն մրցումներն ողջունելու համար։ Փլած բաժին բեկորներէն պատգարակներ շինուեցան վիրաւորները փոխադրելու համար։ Մինչև իրիկուան ժամ 5, զոհերէն 19 հոգին մեռան եւ վիրաւորներուն ամբողջ թիւն 190ը կ'անցնէր հիւանդանոցներուն մէջ։ Հարիւրի չափ ուրիշ վիրաւորներ ալ իրենց տուները փոխադրուեցան։ Դժբախտներուն մեծագոյն մասը Կլասքօյի և շրջակայ գիւղերուն բնակիչներէն են։ Վիրաւորներէն վաթսունին կեանքը վտանգի մէջ է։

ՊԵՐԼԻՆԻ ԼՐԱԳԻՐՔ ԿԳՐԵՆ.—Երեք տարի առաջ, Ֆիլատելֆիոյ Ուէնամէյքըր Վաճառատան պետն հիւսիսային ծովուն մէջ իր ճամբորդութեան միջոցին խնդրեց ներկայանալ Վիլհէլմ կայսեր, որ այն ատեն իր զօսաշրջական ճամբորդութիւնը կ'ընէր հիւսիսային ծովուն մէջ։ Հանդիպումը տեղի ունեցաւ [illegible] շոգենաւին մէջ։ Մր. Ուէնամէյքըր Վիլհէլմ Բ.ի առջև ելնելով, ուժգին կերպով սեղմեց անոր ձեռքը, և ըսաւ.—«Ինծ համար մեծ հաճոյք մ'է որ ձեզ նման ձեռներէց երիտասարդի մը կը ծանօթանամ։» Կայսրը շատ հաւնեցաւ իր ամերիկացի խօսակցին համարձակութեան, և տեսակցութենէն վերջ իր շուրջ գտնուողներուն ըսաւ.—«Երբեք ա՛յսքան զուարճալի խօսակցութիւն ունեցած չեմ։»

ՊԵՐԼԻՆԻ գործարանատէրներուն Դաշնակցութիւնն որոշեց հինգ օրուան համար ճամբել բոլոր այն գործաւորները՝ որք առանց լուրջ պատճառի տօն կ'ընեն Մայիս 1ին։ Այս սպառնալիքին հակառակ, քանի մը գործաւորական մասնախմբեր որոշեցին տօն բռնել։

ՊԱՊԻՆ ԿՏԱԿԸ.—Լէոն ԺԳ. իր պապական յոբելեանին առթիւ կարդինալներուն շնորհաւորութիւններն ընդունելու ատեն, ուղերձի մը պատասխանելով խօսեցաւ նաև իր վերջին կոնդակին վրայ, և յայտարարեց թէ պէտք էր իր կտակն համարել զայն։ Իր մահուան այս ակնարկութիւն բողոքի առիթ ըլլալով, «Ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ, յարեց Պապը, մարդ 93 տարեկան հասակին մէջ հարկաւ կրնայ իր կտակը գրել։ Երեք անգամ արդէն կտակս գրած եմ, առաջինը 1837ին, քոլէրայի համաճարակին ատեն։»

ՇԱՄԱԽԻ.—Ռուս կառավարութեան կարգադրութեամբ, անդրկովկասեան երկաթուղիք մինչև Դեկտ. 31 հաց, ուտեստեղէն և ուրիշ առարկաներ ձրիաբար պիտի փոխադրեն Շամախիի երկրաշարժէն արկածելոց համար։

*** Բեդերսպուրկի Պաշտօնաթերթն Ապրիլ 7ին հրատարակեց վերջ. Զարին թիկնապահ Օպոլէնսքի իշխանին տեղեկագիրը Շամախիի երկրաշարժին եւ արկածելոց վիճակն սփոփելու համար ձեռք առնուած տնօրինութեանց վրայ։ Պաշտօնական տեղեկագրին նայելով, մեռնելոց թիւն է ճիշտ 1,000, որոց 914ը բուն Շամախիի և 86ը գիւղերուն մէջ։

ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԱՒ ԵՐԴՈՒՄ.— Ռուս կառավարութեան հրամանաւ, այսուհետեւ վարչային, պետական, ինչպէս նաև զինուորական ծառայութեան մէջ մտնող օտարազգականք պարտաւոր են ռուսերէն լեզուաւ երդում ընել։

ԱԹԷՆՔԻ ՊԱՆՔԱՆ.— Ամբողջ արքայական ընտանիքը շաբաթ օր ներկայ եղաւ Ազգային Պանքային հիմնարկութեան 60րդ տարեդարձին արարողութեան։ Աթէնքի Մետրապոլտին աղօթքէն վերջ, ներքին գործոց նախարարն ի վեր հանեց Պանքային բեղնաւոր գործունէութիւնը, և կատարած յառաջդիմութիւնքը։ Բաժնետուաց ժողովին նախագահ Մ. Ծիվանոբուլոս Պանքային պաշտօնավարութեան պատմութիւնն ըրաւ։ Ի վերջոյ, Պանքային կառավարիչ Մ. Սդրէյդ շնորհակալութիւն յայտնեց թագաւորին, և շնորհաւորական հեռագիր ղրկողներուն, որոց մէջ կ'գտնուին Պաւիերիոյ խնամակալ իշխանը՝ Պանքային հիմնադիր Օթոն թագաւորին եղբայր, Ռոչիլտեան տունը, են։ Գերման դեսպանը Մ. Սդրէյդի յանձնեց Պաւիերիոյ թագաւորին կողմէ իրեն տրուած Ս. Միքայէլի Մեծ Խաչը։

ՅԻՄԱՐԻ ՄԸ ԳՈՐԾԸ.— Իտալացի խելագար մը Հռոմի շրջակայքը, Թաւոլ փոքրիկ քաղաքին հրապարակին մէջ յարձակեցաւ Իտալիոյ ներքին գործոց նախարար Մ. Ճիօլիդդիի վրայ, առանց սակայն գիտնալու։ Նախարարը կրցաւ ինքզինք պաշտպանել խելագարին դէմ, մինչեւ որ ոստիկանք համնելով ձերբակալեցին և յիմարանոց տարին զայն։

ՁԻԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ. —Պերլինի մէջ հրատարակուած պաշտօնական վիճակագրութիւնք կ'ցուցնեն թէ անցեալ տարի Պերլինի մէջ 12,299 ձիու միս սպառած է 1901ին, բաղդատմամբ 11,610 ձիու անցեալ 1900 տարւոյն, և 10,037 ձիու 1899ին։ Պրեսլաւի մէջ կերեր են 7,107 ձի, Տուսէլտորֆի մէջ 6,922, Արնսպէրկի մէջ 4,407։ Բօզէնի բնակիչք (Լեհերը) 1901ին 126 ձի սպառեր են, Պոմպէրկի բնակիչք 110, Կուսպլէնցի մէջ 16 միայն։ Դիտուած է որ ձիու միսն աւելի նպաստաւոր ընդունելութիւն կ'գտնէ քաղաքներուն քան գիւղերուն մէջ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆԸ. — Բարիզի բժշկական Ակադեմիոյ անցեալ օրուան նիստին մէջ, Տքր. Ժավալ յայտարարեց թէ մարդ վեցերորդ զգայարան մ'ալ ունի, որուն կեդրոնն է ճակատը։ Տքդ. Ժավալ կոյր է, և իր ճառին մէջ հերքեց այն կարծիք թէ Բնութիւնը կուրութեան թերին կ'լրացնէ՝ զօրացնելով շօշափելիքին և լսելիքին զգայնութիւնը։ Երբ մէկը կոյր է, ըսաւ, վեցերորդ զգայարանը կ'սկսի զօրանալ և զարգանալ։ Ամէն մարդ ունի այդ զգայարանը, բայց անգործ է, քանի որ միւս հինգ զգայարանները կ'գործեն։ Այդ թագուն զգայարան կը կոչուի «զգայարան խոչընդոտներու դէմ»։

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՈՍԿԵՀԱՆՔԵՐԸ.— Հանքերու Սենեակին մէջ որ պատերազմէն ի վեր առաջին անգամ ըլլալով անցեալ շաբթու գումարուեցաւ ի Եօհաննէսպուրկ, Նախագահ Մր. Ռուլիօ յայտարարեց թէ 1,635 մեքենայ այսօր կ'բանին, և հաւանական է որ քանի մը ամիսէն ոսկեհանքերու աշխատութիւնք վերստանան իրենց հին կացութիւնը, ինչպէս որ էր 1899 Հոկտ.ին (պատերազմէն առաջ)։ Իր մասնաւոր քննութեան արդիւնքը ցոյց տուած է որ պօէր կառավարութիւնն անգլիական գրաւումէն առաջ Թրանսվալի ոսկեհանքերէն ստացած է 642,184 ունկի զուտ ոսկի, որ կ'արժէ 2 միլիոն 697,173 սթերլին։ Պատերազմին հետեւանօք ոսկիի կորուստէն զատ, դրամական զանազան ծախքերու համար ուղղակի կորուստն եղած է 3 միլիոն 400,000 սթերլին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Կիւմիւշհանէի կառավարիչ անուանուեցաւ Ամասիոյ կառավարիչ Հիւսնի պէյ, որուն յաջորդեց Կիւմիւշհանէի կառավարիչ Իպրահիմ Մուխլիս պէյ։

Հավզայի (Սվազ) Գայմագամ անուանուեցաւ Սիւրուչի (Հալէպ) Գայմագամ Ռէպտիւրրահման Նայիլ էֆ., որուն յաջորդեց Գարաքիլիսէի Գայմագամ Իպրահիմ Նէճաթի էֆ.։

Պէյշէհիրի (Գօնիա) Նայիպ անուանուեցաւ Ագսարայի Նայիպ Ալաէտտին էֆ.։ Քէսքիմի (Էնգիւրի) Նայիպ՝ Օրտուի Նայիպ Հաֆըզ Սիւլէյման էֆ.։ Ինէպօլուի (Քասթէմունի) Նայիպ՝ Գարաճա-Սուի Նայիպ Հասան Ֆեհմի էֆ.։

—Ա. Օսմանիէ պատուանշան տրուեցաւ հեծելազօրաց Ֆէրիգ Շիւքրի փաշայի։ Բ. Մէճիտիէ՝ ռուսական հպատակ Մ. Լէոբոլտ Օէրի և Մ. Կօրլէնքօ—Տօլինայի։ Գ. Մէճիտիէ՝ Մ. Միքլավօքիի։ Բ. Շէֆգաթ՝ Տիկին Կօրլէնքօ—Տօլինայի։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Ռումանական նորընտիր դեսպան Մ. Լահօվարի երէկ առաւօտ տեսակցութիւն մը ունեցաւ աւստրիական դեսպան Պարոն Քալիչէի հետ։

ՇՈՒԷՏԻ դեսպանը պաշտօնապէս

ծանոյց Կայսերական կառավարութեան թէ Շուէտի և Նորվեկիոյ Թագուհւոյն քոյրը՝ Մարի իշխանուհին՝ մեռած է։

ՔԱՂԱՔԱՑԻՆ բժշկական վարժարանին մէջ եւս մանկաբարձական դասարան մը հաստատուեցաւ, որուն համար փափաքողք այժմէն կրնան աշակերտ արձանագրուիլ։ Այս դասարանէն վկայեալ մանկաբարձները գաւառները պիտի ղրկուին պաշտօնով։

ՀԱՆԳՍՏԵԱՆ Թոշակաց Սնտուկի ժողովին անդամներուն վրայ բժիշկ անդամ մ՚ալ պիտի աւելնայ, որպէս զի հանգստեան կոչուելու փափաքող պաշտօնէից վերաբերեալ տեղեկագրերն այլ եւս քաղաքային բժշկական ժողովոյ քննութեան ղրկելու հարկ չմնայ։

ՃԱՊՈՆԱԿԱՆ նաւատորմիղ մը ի մօտոյ Պիրէէն պիտի ժամանէ, Նաւակալն և իր սպայակոյտն Աթէնք երթալով, այցելութիւն պիտի տան Թագաւորին։ Նաւատորմիղը քանի մ՚օր հելլենական ջուրերուն մէջ մնալէ վերջ, պիտի այցելէ նաև Օսմ. նաւահանգիստները։ Կ՚ըսուի թէ Ճապոնցի ծովակալը Պոլիս եւս պիտի այցելէ, Ճապոնի կայսեր մէկ ինքնագիր նամակն և իր մեծարանքը մատուցանելու Վեհ. Սուլթանին։ Ճապոնի կառավարութիւնը, այս այցելութենէն վերջ, դեսպանութիւն մը պիտի հաստատէ Պոլսոյ մէջ։

ՄԷՏԻՆԷԻ մէջ 400,000 դրչ. ծախքով հիւանդանոց մը պիտի կառուցուի։

ՃԻՏՏԷԷ ցարդ 27,336 ուխտաւորք մեկնած են, որոց 836ը Պարսկաստան, 8136ը Հնդկաստան, 9682ն Եաւա, 2372ը Կ. Պոլիս, 5815ը Ռուսիա, և 405ն Եգիպտոս։

ՓԱՐԹԱԼԻ Գայմագամ Սիւլէյման Չէքի պէյ, որ ժամանակէ մ՚ի վեր հիւանդ էր, երէկ առաւօտ մեռաւ Պարթալի մէջ։ Մարմինը Պոլիս բերուելով, «Սըրա—Սէրվիլէր» գերեզմանատան մէջ թաղուեցաւ։ Ուլայի Բ. աստիճան ունէր, և 50 տարիէ ի վեր Պետական ծառայութեան մէջ էր։

ԵՐԿՐԱՇԱՐԺ.—Մարտ 9ին Այնթապի մէջ երկրաշարժի բուռն ցնցում մը զգացուած է, արեւմուտքէն արեւելք ուղղութեամբ։ Խախուտ պատ մը միայն փլած է։ Կեանքի կորուստ չկայ։

ՎԻԿՏՈՐԻԱ—ԼՈՒԻԶ զբօսանաւը Մարտ 29ին Տրապիզոն ժամանելով, զբօսաշրջիկները ցամաք ելեր և պտոյտներ կատարեր են։

ՂԱԼԱԹԻՈՅ ԹՈՒՆԷԼԻՆ մէջ պատահած վերջին ցաւալի դէպքէն ի վեր, Տնօրէնութիւնը միջոցներ ձեռք առաւ նմանօրինակ ցաւալի դէպքերու կրկնութիւնն արգիլելու համար։ Վակոնին դրան շղթան վերցուց, և անոր տեղ փայտեայ դուռ մը հաստատեց։

ԿԱՐԵՒՈՐ ԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.—Բերայի Սանթա—Մարիա եկեղեցւոյ աւագերէցին դրամարկղն երէկ առաւօտ անծանօթ անձերու անակնկալ այցելութիւնն ընդուներ է։ Աւագերէցը, որ ժամ 2ին եկեղեցի մտած էր ժամերգութիւն կատարելու, երբ սենեակ կ՚դառնայ, կ՚տեսնէ որ դրամարկղը բացուած է, և մէջէն 365 ոսկի, 50 մէճիտ, և 20 ու 25 ոսկինոց երկու մուրհակ աներեւոյթ եղած են։ Աւագերէցն իսկոյն աւստրիական դեսպանատունը դիմելով, իրողութիւնը կ՚իմացնէ։ Դեսպանատան Ա. Թարգման Մ. Ալֆրէտ եւս տեղեկութիւն կուտայ Բերայի կառավարիչ Համտի պէյի, որ անմիջապէս խուզարկութեան կ՚ձեռնարկէ ոստիկաններու ձեռամբ։ Կատարուած քննութենէն կ՚հասկցուի թէ դրամարկղը գրուած էր աւագերէցին սենեակին յարակից ներքնասենեակի մը մէջ։ Սենեակն ունէր երկու բանալի, որոց մին աւագերէցին քով կը գտնուէր և միւսն ալ ուրիշ քահանայի մը քով։ Իսկ դրամարկղին բանալին լոկ աւագերէցին քով։ Սա, եկեղեցին մտած պահուն, սենեկին դուռը կղպեր է, բայց ի դարձին սենեակին դուռն ու դրամարկղին դուռը բաց գտեր է։ Սենեակին դուռը խորտակուած չէր, ոչ ալ դրամարկղին դուռը, այլ երկուքն ալ բանալիով բացուած էին։ Գողցուած գումարներէն զատ դրամարկղը՝ անօթներու մէջ գրուած դեռ շատ մը օսմանեան, անգլիական և ֆրանսական ոսկիներ, մէճիտիէներ, և արծաթեղէններ կ՚պարունակէր, որոց չէ դպած գողը, այլ տարակով ոսկին չորթելով կ՚ծիկը դրեր է։ Աւագերէցն յայտարարեր է թէ իր ընկերոջ վրայ կատարեալ վստահութիւն ունի, որով հարկ չէ տեսնուեր երկրորդ քահանային հարցաքննութեան։ Աւագերէցն յայտարարած է թէ անծանօթ մարդու մը վրայ կ՚կասկածի, որ երեք—չորս օրէ ի վեր բարեպաշտաբար եկեղեցի կ՚յաճախէր և տեղեկութիւն ուներ է անծանօթին կերպարանքին վրայ։ Գողցուած գումարն եկեղեցիին դրամն է եղեր։ Իսկ 45 ոսկիի երկու մուրհակներն իր անուամբ Մանիֆաթուրաճիի մը փոխ տուած գումարին մուրհակներն են։ Ոստիկանութիւնը քննութիւն կ՚կատարէ գողը կամ գողերը գտնելու համար։

—Գատըգիւղ, Սէօյիւտլիւ—Չէշմէի կողմը, նախընթաց գիշեր պահակախումբն հոն գեգերող յոյն երիտասարդի մը վրայ կասկածելով, ձերբակալեց զայն։ Վրայէն գտնուեցան երկու ատրճանակ և երկու մատանի։ Երիտասարդն որ միջնորդ Թոտորաքիի որդին էր, հարցաքննուելով խոստովանեցաւ թէ տունէն գողցած էր զանոնք։

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ.— Յունարէն թերթերը մեծ գովեստով կ՚խօսին Յունաց Պատրիարքին առատաձեռնութեան վրայ, յիշելով անոր 500 ոսկիի նուէրը, որով Պոյաճի գիւղի մէջ մանչերու դպրոց մը պիտի կառուցուի, ինչպէս ծանուցած էինք։

ՀԱՑԿԵՐՈՅԹ.—Պարսկական դեսպան իշխան Միրզա Րիզա խան, ինչպէս ծանուցինք, երէկ գիշեր հացկերոյթ մը տուաւ, որուն ներկայ գտնուեցան աւստրիական դեսպան Պառոն Քալիչէ և իր որդին, անգլ. դեսպան Սըր Ն. Օ՚Քոնոր, ֆրանսական դեսպանն ու դեսպանուհին, շուէտական դեսպանն ու դեսպանուհին, ամերիկեան դեսպան Մր. Լիշման, իր աղջիկն և դուստրը, սերպիական դեսպանն ու իր դուստրը, Սէ—Լերան, հոլանտական, պելժիական և ռումանական դեսպանները, պուլկարական գործակատարը, և դեսպանատան աւագ պաշտօնատարք։ Հացկերոյթն սկսաւ ժամ 9ին և վերջացաւ ժամ 4ին։

ԴՈՒՇ—ԱՏԱՍԸԻ այծերուն մէջ տարափոխիկ հիւանդութիւն մը ծագած է։ Այտընի նահանգին անասնաբուժական քննիչը տեղւոյն վրայ երթալով, զգուշական միջոցներ տնօրինած է։ Անոնք որ այծերուն հիւանդութիւնը ծածկելով, ծաւալման պատճառ եղած են, պիտի պատժուին։

ՍՈՖԻԱՅԻ ռուսական գործակատար Մ. Պախմէթիէֆ, որ Օտեսայէ մայրաքաղաքս եկած էր, երէկ Սոֆիա մեկնեցաւ։

ՀԱՄԻՏԻԷ Էրթօղրուլ հեծելազօրաց գունդին ուսուցիչ Մէհմէտ Ալի փաշա գերմաներէնէ թուրքերէնի թարգմանած է Հեծելազօրաց մարզանքին վերաբերեալ կարեւոր երկասիրութիւն մը, որ Կայսերական հրամանաւ պիտի տպագրուի Օսմանիէ տպարանին մէջ։

ՊԷՐՈՒԹԻ կուսակալին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեցաւ, հսկելու համար Հայֆայի երկաթուղւոյ շինութեան վրայ, որ Հիճազի երկաթուղւոյ մասնաճիւղը պիտի կազմէ։

ՑԱՄԱՔԱՅԻՆ Երկրաչափական Վարժարանի ուսանողք, իրենց ուսուցիչներուն հսկողութեան տակ, սկսած են գործնական փորձեր կատարել, կամուրջներ, ամրութիւններ, հրետանիներու զետեղման համար պատնէշներ շինելով։

ԲԷՆՏԻՔԻ ողայոց մէջ կարմրախտ ծագած ըլլալով, կրթական նախարարութեան որոշմամբ տեղւոյն դպրոցները 12 օրուան համար գոցուեցան։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻ Տնօրէնի օգնական Բանճիրի պէյ երէկ տեսակցեցաւ Մաքսային Վերատեսուչ Նազիֆ փաշայի հետ։

ԱՐԿԱԾ.— Շիրքէթի 32 թիւ շոգենաւը, երէկ առաւօտ ժամ $4^1/_2$ին միջոցները, Վօսփորէ գալով երբ կամուրջին կ՚մօտենար, նաւազներէն Սիւրմէնէցի Շապան, պարանը նետած պահուն ոտքը սահելով շոգենաւուն ու նաւամատոյցին մէջտեղը մնաց և ճզմուեցաւ։ Շիրքէթի բժիշկը Տոքթ. Րէուֆ պէյ անմիջապէս շոգենաւ գալով, նաւազին ոտքը քննեց և հարկ տեսաւ կտրել զայն։ Նաւազը անմիջապէս գերմանական հիւանդանոցը ղրկուեցաւ։

—Երէկ առաւօտ պուլկար պարտիզպան մը, կռնակը կողով մը շալկած, երբ կամուրջէն շոգենաւ կ՚նստէր Գատըգիւղ երթալու համար, արկածով ծովը ինկաւ, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ ազատեցաւ։

ՅԱՐՁԱԿՈՒՄ.— Բերայի Զօղրաֆիօն վարժարանին ուսուցիչ Մ. Վասիլ Սիրքիու նախընթաց գիշեր, Թէփէ Պաշիի կողմը յարձակում կրեց երկու անծանօթներու կողմէ, որք չորթեցին անոր ժամացոյցն ու շղթան, վրան զէնք փնտռելու պատրուակին տակ։ Ոստիկանութիւնը գողութեան հեղինակները կ՚փնտռէ։

ԿԱՅԾԱԿ.— Անցեալ հինգշաբթի գիշեր, Հալէպի մէջ պատահած փոթորկի մը պահուն, իտալական դեր—հիւպատոսին բնակարանին վրայ կայծակ ինկեր է։ Քանի մը ապակիներ, վառարանին խողովակներն և դրան վերայ ալ երկու քար կոտրեր են, բայց բարեբախտաբար մարդու վնաս չէ պատահեր։

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ Վարչութիւնը կը ծանուցանէ թէ մայրաքաղաքիս այն ամէն թաղերու և գիւղերու մէջ ուր նամակատուններ բացուած են, 10 փարանոց թղթատարական քարտեր (քարդ-բոսդալ) պիտի ծախուին և ընդունուին։

ՈՃԻՐ.— Փուլէ—Գափուի բնակիչներէն քարակոփ Ճիվանի, նախընթաց գիշեր գինով վիճակի մէջ, փողոցէն դառնալով, Զ. շրջանակի թաղապետութեան հիւանդանոցը ղրկուած և հոն մեռած էր։ Ի սկզբան այնպէս կարծուած էր թէ գինովութեան հետեւանօք մեռած էր, սակայն ոստիկանութիւնն համոզում չկրնալով գոյացնել, երէկ դիազննութիւն կատարել տուաւ դիակին վրայ, և հաստատուեցաւ թէ գանկին վրայ բացուած վէրքի մը հետեւանօք մեռած էր։ Ճիվանիի եղբայրն ալ ոստիկանութեան դիմելով յայտարարած է թէ Թօզ—Գօբարանի կողմը Արօսթօլի տունը բնակող Թավա—Գօչօ, իր կինը Տէսբինօ և Փօղէֆ ծեծելով սպանած են իր եղբայրը։ Ամբաստանեալք ձերբակալուած են։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ

Խառն Ժողովը գումարուեցաւ այս առաւօտ, Ղալաթիոյ Խորհրդարանը նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Եուսուֆեան Տիգրան էֆ.ի։ Ատեանը բացուեցաւ ժամ 5ին։ Կարդացուեցաւ Մշոյ Գաւառ. Խառն Ժողովոյ և Պատր. Փոխանորդ Տ. Խոսրով Ս. Վ.ի պաշտօնագրերը, որք Առաջնորդի ընտրութեան հրահանգ կ՚խնդրէին։ Որոշուեցաւ գրել թէ Գաւառային Ժողովոյ կազմակերպութենէ և անոնց ընտրութիւնը հաստատուելէ յետոյ Առաջնորդի ընտրութեան հրահանգ պիտի տրուի։

Բաղէշի Նորընտիր առաջնորդ Տ. Վահան Ս. Վ. Յակոբեան ներկայացաւ Ժողովոյ և անձամբ բացատրեց իր հրաժարման պատճառները։ Տ. Վահան Վ. յայտարարեց թէ գլխաւորաբար իր առողջական վիճակը չի ներեր ընդունիլ այդ պաշտօնը, սակայն պատրաստ է գաւառային պաշտօն մը ստանձնել երբ առիթը ներկայանայ։ Խորհրդակցութիւնք կ՚շարունակուին։

Զատկական տօներու առթիւ, գաւառային որբանոցներու երկամսեայ ամսաթոշակներն հետզհետէ կ՚ղրկուին Նպաստից Սնտուկէն։

— Ս. Պատրիարքը պաշտօնագրով մը Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Կիրակոս Սրբազանի ուշադրութիւնն հրաւիրած է Այնթապի մէջ վերջերս երեւան ելած Փիլիպպոսեան անուն աղանդին վրայ և յանձնարարած է որ հարկ եղածն ի գործ դրուի զգուշացնելու համար տեղւոյն ազգայինները դաւանական մոլորութիւններէ։ Ն. Սրբազնութիւն այս առթիւ խրատական մ՚ալ պատրաստած է որ պիտի ղրկուի Այնթապ տեղւոյն եկեղեցւոյն մէջ կարդացուելու համար։ Այս խրատականով Ս. Պատրիարքը կ՚յորդորէ պաշտել և յարգել Ս. Հարց հաւատքն ու Եկեղեցին, և փոխանակ Ս. Գրքին բառերուն հետ խաղալու և իմաստները խեղաթիւրելու, ոգին ըմբռնելու և գործադրելու պէտքը կ՚զգացնէ։

—Պատրիարքարանի յանձնարարութեան համաձայն Խարբերդի Պատր. Փոխանորդ Տ. Եղնիկ Ս. Վ. Գալփաքճեան, Սանասարեան Վարժարանը Խարբերդ փոխադրելու մասին տասներկու էջերէ բաղկացեալ ընդարձակ տեղեկագիր մը ղրկած է Պատրիարքարան, կարգ մը լուսանկարներով։ Տ. Եղնիկ Վրդ. ուրիշ տեղեկագրով մ՚ալ, Խարբերդի Որբանոցն արհեստանոցի վերածելու միջոցներուն վրայ Պատրիարքարանէ պահանջուած տեղեկութիւններն հաղորդած է։

—Իզմիրի Ազգ. Հիւանդանոցի հարիւրամեայ յոբելեանին առթիւ Ս. Պատրիարքը կոնդակ մը պատրաստած է որ այսօր կ՚ղրկուի յանձնաժողովոյ կարգադիր մասնախմբին նախագահ Տ. Մելքիսեդէկ արքեպս.ի։ Այդ կոնդակին մէջ Ն. Սրբազնութիւն կ՚օրհնէ նոյն բարեգործական հաստատութեան կանոնաւորութեան համար նուիրատուներն և աշխատողները, և առ հասարակ ամէնուն համար կարողութիւն կը մաղթէ։

—Նոր—Պայազիտէ (Կովկաս) կ՚գրեն թէ երիտասարդ մը, ուզելով նշանուիլ տեղւոյն ծանօթ վաճառականի մը աղջիկներէն մէկուն հետ, իր հօր միջոցաւ դիմում կ՚ընէ եւ համաձայնութիւն կը գոյանայ։ Նշանադրութիւնը կ՚կատարուի բարեկենդանի օրը։ Մատանին օրհնելու պահուն, տղան կ՚ուզէ փախչիլ, ըսելով թէ «իր տեսած աղջիկը չէր ան»։ Աղջկան կողմի բարեկամները կը սկսին հայհոյել եւ նոյն իսկ կ՚պատրաստուին վիրաւորել երիտասարդին բարեկամները, բայց ներկայ երեւելի անձի մը միջամտութեամբ, յուզումը կ՚հանդարտի։ Խեղճ երիտասարդը, տեսնելով իր փորձին անյաջողութիւնը, կ՚համաձայնի ըսելով թէ ըրածը չէր գիտեր։ Աղջկան տէրերն այլ եւս հաւատ չընծայելով երիտասարդին խօստման, անոր բարեկամներուն ոսկի եւ արծաթ զարդերը վար կ՚դնեն իբր գրաւ, մինչեւ պսակադրութեան օրը։ Երեք օրէն տեղի կ՚ունենայ բռնի պսակադրութիւնը։

—Այսպիսի ամուսնական դէպք մ՚ալ վերջերս տեղի ունեցեր է Դամասկոսի Հայ գաղութին մէջ։ Զինուորական դեղագործ մը տարի մ՚առաջ Պոլիս գալով, աղջիկ մը տեսած էր։ Տարի մը վերջը, երիտասարդին մօրաքոյրը, որ միջնորդի դեր կատարած էր, աղջիկը, օժիտին սնտուկն ալ միատեղ, Դամասկոս կ՚տանի, նոյն երիտասարդին հետ ամուսնացնելու համար։ Բայց հոն, երիտասարդը, աղջիկը տեսնելուն պէս, կ՚առարկէ թէ Պոլսոյ մէջ իր տեսածը չէ և չուզեր պսակուիլ։ Բայց մօրաքոյրն յայտարարելով թէ իրեն համար աւելի լաւ է մեռնիլ քան աղջիկն ետ տանիլ, կ՚ստիպէ իր քեռորդին որ անպատճառ պսակուի, զինքն այս անել կացութենէն փրկելու համար, և յետոյ, եթէ չուզէ, կրնայ արձակել զայն։ Եւ այնպէս ալ եղած է։ Կ՚ըսուի թէ այժմ Նորապսակ կինը Պոլիս ղրկուած է, յուզումէն հիւանդացած։

—Պաշտօնակից մը կ՚գրէ.—«Անկէ առաջ գրած էինք թէ Մայր եկեղեցւոյ զանգակատան ժամացոյցին նորոգութիւնը յանձն առած է բարեսէր ազգային մը։ Այս անգամ յիշեալ ազգայինը մասնաւոր ժամագործ մը ղրկած է որ, պէտք եղած քննութիւնը կատարելէ ետքը Թաղ. Խորհրդոյ հետ տեսակցելով յայտներ է թէ զանգակատան վարի մասը վանդակորմելէ ետքը միայն կարելի է ժամացոյցին նորոգութեանը ձեռնարկել, իբր ապահովիչ միջոց մը թռչուններու աղտեղութեանց։»

—Հայ—հռոմէական թերթեր.—Կ՚ըսեն թէ Մալաթիոյ Առաջնորդ Խաչատուրեան Եպս. և Խարբերդի Առաջնորդ Իսրայէլեան Եպս. Կ. Պոլիս կուգան պաշտօնի վերաբերեալ գործերով, բայց Ատանայի Առաջնորդին գալուստը քիչ մը եւս յապաղած է, մինչեւ որ ապաքինի և տեղական ինչ ինչ գործերը կարգի դնէ։ Հայ—հռոմէական Եպիսկոպոսք կ՚մտադրեն Սինոդ կազմել համայնքին վերաբերեալ գործերուն համար։

ՇԱՄԱԽԻ ԵՒ ՎՐԱՑԻՔ.—Տփղիսէ կ՚գրեն.—«Աշխատաւոր ռուսերէն լրագրում Ֆ. Ժորդանիա ասում է թէ Վրաց պատմական ձեռագիր գրուածքներից մէկի մէջ նա գտել է յաւելուած, որի մէջ խօսւում է Շամախում պատահած երկրաշարժի մասին Վրաց Թամար թագուհու աւագ որդի Գէօրգի—Լաշիի ծննդեան երկրորդ տարում—1192 թւին։ Այս յաւելուածի մէջ, ի միջի այլոց, ասված է. «Նա որ սարսեցնում է երկիրը և մի հպումով միայն ստիպում է լեռներին ծուխ արձակելու, դղրդեց Շամախի քաղաքի ամրութիւններն և պատերը, և այդ ժամանակ անյայտացաւ նրա ամբողջ ազգաբնակութիւնը, որի հետ և Վրաց Շարվանշէ թագաւորի ընտանիքը, նրա կինն և երեխաները. անօրինակ վիշտ համակեց կենդանի մնացածներին. Նրանք անձնատուր եղան անմխիթար տրտմութեան, ցանեցին մոխիր գլխների վրայ, որովհետեւ ոչ մի տեղից փրկութիւն չէին սպասում»։ Բայց մնում է պարզելու դեռ եւս մի բան,—շարունակում է Ֆ. Ժորդանիա,—թէ չէ՞ խօսւում արդեօք վերոյիշեալ հատուածի մէջ քաղաքի և ազգաբնակութեան երկրի մէջ ընկղմելու և ոչ սոսկ կործանման մասին, որովհետեւ Վրաց բնագրի մէջ գործ են ածված «ազգաբնակութիւնը անհետանալի դարձաւ» խօսքերը»։

Տիկին Իսկուհի Կ. Փափազեան Ս. Թագաւոր եկեղեցւոյս նուիրած է մեծագիր և գեղանկար Ընթրեաց պատկեր մը՝ ազգային ծանօթ նկարիչներէն Եաղըճեան Սիմոն էֆ.ի աշխատասիրութեամբ պատրաստուած։ Ազգ. Կեդր. Վարչութեան Պատկ. Կրօնական Ժողովոյ կողմէ արտօնեալ սոյն պատկերին օծման հանդէսը պիտի կատարուի յեկեղեցւոջ գիւղիս, վաղը, շաբաթ, Ս. Լուսաւորչայ տօնին օրը, ի ներկայութեան Գեր. Տ. Մեսրոպ և Տ. Գրիգորիս Ս. Արքեպիսկոպոսաց և Տ. Աղան և Տ. Գնէլ վարդապետաց։ Այս առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան, ի յիշատակ նուիրատու ազնիւ Տիկնոջ բարեպաշտ ծնողաց, զոր կ՚ծանուցանենք ի գիտութիւն թաղիս ազգայնոց և ի շնորհակալութիւն եկեղեցւոյս նուիրատուին։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Վ. Ատենապետ
Ռուբէն Ս. Բէմճաճեան Գ. Գազանճեան

Գատըգիւղ, 29 Մարտ.

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿ

Կ. Պոլիս, 29 Մարտ

ԹԻՖԹԻԿ.— Հրապարակը կայուն է։ Պրատֆորտի մէջ այս օրերս վաճառում չըլլալուն համար, գնողներն հրապարակէ քաշուեցան։ Նոր վաճառում չկայ։ Գործերու ընթացքին նայելով, մօտերս ալ մեծաքանակ վաճառումներու յոյս չկայ։ Չի կարծուիր թէ գիներուն վրայ զեղչ ըլլայ։ Բիչ տէրէճէ տեսակը 14—$14^1/_2$ դրչ., սովորական ապրանքները 15—16, և առաջին տեսակ նոր ապրանքները $16^1/_2$—17 դրչ.ի ծախուելու հաւանականութիւն կայ։

ԱՖԻՈՆ.— Հրապարակն օր օրի կը թուլնայ։ Գիներն իջնալու հակամէտ են։ Ապրանք ունեցողները ծախելու տրամադրութիւն ունին, բայց գնող կ՚պակսի։ Այս պատճառաւ, վաճառում եղած չէ։ Անուանական գիներն են 102—105 դրչ., բայց եթէ հաստատութիւն գտնէ այն զրոյց թէ նոր բերքը 10,000 սնտուկէն պակաս պիտի չըլլայ, հաւանական է որ գիները քիչ մ՚եւս իջնան։

Աըմտէ.—Հրապարակն անփոփոխ։ Ա. տեսակ ճերմակ ցորեն $10^1/_4$—$10^1/_2$ դրչ., խառնուրդ 11—$11^1/_2$, համարախառն 12—$12^1/_4$, կարմիր, 30—32 փր.։ Կարեւոր գործառնութիւն չկայ։

Դափնէ.—Հրապարակը կայուն։ Եւրոպական հրապարակներու վրայ գիներն իջնալու հակամէտ ըլլալով, եթէ գնող ալ գտնուի, մանր տեսակները 23—24 փր.ի հազիւ պիտի ծախուին։

Մորթ.—Նապաստակ 230—232 դրչ., աղուէս 30—35, շնագայլ 20—22, կուզը 130—140, կուզ 110—120, ըստ տեսակի։ Փութկոտ գնումներ չկան։

ԱՆԳԼԻՈՅ Պանքային շաբաթական հաշուեկշռէն կ՚երեւի թէ մետաղադրամը պակսած է 36,000, առեւտրական թուղթերը պակսած են 7,775,000 եւ պանքատոմսերու պահեստը պակսած է 397,000 ոսկի, որով պահեստից համեմատութիւնը 41.69էն բարձրացած է 47.75ի։

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ՎԻԷՆՆԱ, 10 Ապրիլ.—Գերման վարչապետ Կոմս Պիւլով և Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Կոլուխովսքի երկար այցելութիւններ փոխանակեցին։ Ֆրանց—Եոզէֆ կայսր Պիւլով Կոմսն ընդունեց ունկնդրութեան որ մէկ ժամէն աւելի տեւեց։ Երեկոյին հացկերոյթ մը տրուեցաւ Կոլուխովսքի Կոմսին տան մէջ, ի պատիւ գերման վարչապետին։ Ներկայ էր նաեւ Վիեննայի իտալական դեսպան Նիկրա Կոմսը։

ԽԶՈՒՄ ԻՏԱԼԻՈՅ ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ

ՊԷՐՆ, 10 Ապրիլ.—Դաշնակցային Խորհուրդին և Պէրնի իտալական դեսպան Մ. Սիլվէստրէլլիի միջեւ անհամաձայնութեանց հետեւանօք, զուիցերիական կառավարութիւնը պահանջեց Իտալիոյ կառավարութենէն որ իր դեսպանը փոխէ։ Իտալական կառավարութիւնը մերժելով, Դաշնակցային Խորհուրդը պաշտօնական յարաբերութիւնները խզեց Մ. Սիլվէստրէլլիի հետ, և իտալական կառավարութիւնն ալ պաշտօնական յարաբերութիւնը խզեց Հռոմի Զուիցերիական դեսպանին հետ։

ԾՆԹ. ԽՄԲ.—Ժընէվի օրաթերթ մը վերջերս խիստ անպատշաճ ոճով խօսած ըլլալով Իտալիոյ մասին, Պէրնի իտալական դեսպանը ծանուցագիր մը ուղղած էր Զուիցերիոյ կառավարութեան, որ անտես ըրած էր զայն, յայտարարելով թէ ծանուցագիրը պէտք է ուղղուէր Իտալիոյ կառավարութեան կողմէ ղրկուիլ։

ԼՈՆՏՈՆ, 10 Ապրիլ.—Երեսփ. Ժողովին մէջ պատերազմական նախարար Մր. Պրոտրիք յայտարարեց թէ Թրանսվալի կառավարութեան ներկայացուցիչք Քլէրքստորբ ժամանած են, և տեսակցութիւն մը ունեցած են Զօր. Պօթայի հետ։ Շթէյն, Տէվէտ և Տըլարէյ եւս Քլէրքստորբ մեկնած և երէկ հոն ժամանած են։ Մր. Չէմպըրլէն յետոյ յայտարարեց թէ Պօէր պատուիրակները պիտի արտօնուին վերադառնալ իրենց շրջանակները։

ՊԷՐԼԻՆ, 10 Ապրիլ.—Մ. Քաուֆման հրաժարեցաւ Պէրլինի երկրորդ քաղաքապետի պաշտօնէն։ (Ինչպէս կ՚յիշուի, Վիլհէլմ կայսր երկրորդ անգամ ըլլալով չէր վաւերացուցած անոր պաշտօնը։)

ԹԱՆՃԷՐ, 10 Ապրիլ.—Հինգ մարտանաւերէ բաղկացեալ ռուսական նաւատորմիղ մը, երեք ֆրանսական յածանաւերու ընկերակցութեամբ, Թանճէր եկաւ։

ՆԱՍԻՕՆԱԼԻ ԵՒ ՖՈՒՐՆԻԷԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԷ

ՎԻԷՆՆԱ, 10 Ապրիլ.—Ֆրանց—Եոզէֆ կայսր ունկնդրութեան ընդունեց Գերման վարչապետ Պիւլով Կոմսը։ Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Կոլուխովսքի մեծ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ Գերման վարչապետին։

ՊԷԼԿՐԱՏ.—Մ. Միլովանովիչ, որ Սերպիական փոխառութեան մը վրայ բանակցելու համար Բարիզ պիտի երթայ, Վիեննայի մէջ կանգ պիտի առնէ, Կոլուխովսքի Կոմսին հետ տեսակցելու համար։

ԼՈՆՏՈՆ.—Բրեդորիայէ հեռագիր մը կ՚ծանուցանէ թէ Շթէյն, Շալք Պիւրկըր, զօրավար Պօթա, Տէվէտ և Տըլարէյ Ապրիլ 9էն ի վեր Քլէրքստորբի մէջ գումարուած են։

—Աւստրալիոյ Դաշնակցային Խորհրդարանը մաքսական դրութիւնը վերջնապէս ընդունեց։

—Կ՚հաւաստուի թէ ազատական կուսակցութիւնը, Լորտերու Ժողովին մէջ, իրեն պետ ընտրած է Լորտ Ռոզպէրի, հանգուցեալ Լորտ Քիմպըրլիի տեղ։

—Անգլիական նոր փոխառութիւնը, 40 միլիոն ոսկիէն, 3% տոկոսաբեր, պիտի երաշխաւորուի Թրանսվալի հասոյթներով։

ՄՕՏ ՕՐԷՆ լոյս պիտի տեսնէ Ալ. Վ. Սիրունեանի աշխատասիրած՝ Աւետարանի հայ. բնագրին և աշխարհաբար թարգմանութեան գործին Ա. մասը՝ Ս. Մատթէոսի Աւետարանը։

Շատ մը հնախօսական, պատմական ու աշխարհագրական ծանօթութիւններ և խրթին մասերուն բացատրութիւններն որ մէկ մի էջի ստորեւ դրուած են՝ խիստ գնահատելի կ՚ընեն սոյն գործը։ Հեղինակը ջանացեր է մանաւանդ, ժողովրդական հանգամանք մը տալ իր գործին, բոլորովին զանց ընելով շատ մը փիլիսոփայական կամ աստուածաբանական քաշքշուքները։ Ամբողջ գործն երեք հատոր պիտի բովանդակէ։

Ա. հատորին՝ որ կ՚կազմէ Ս. Մատթէոսի Աւետարանը, բաժանորդագրութիւնը բացուած է Պոլսոյ համար՝ 6 դրչ. իսկ՝ գաւառաց համար ճանապարհի ծախքով ի միասին՝ 7 դրչ.։ Սոյն բաժանորդագրութիւնը մինչեւ մայիսի վերջը զօրութիւն պիտի ունենայ, որմէ ետքը Ա. հատորին գինը պիտի ըլլայ 10 դրչ.։ Ա. մասին բաժանորդագրուողները միայն իրաւունք պիտի ունենան միւս հատորներուն վրայ ըլլալիք զեղչին։

Բաժանորդագրութեան համար դիմել

1. Սէրոպ էֆ. Դաւթեան, Խօրասանճի խան, Սիրքէճի, Կ. Պոլիս։
2. Մելքոն էֆ. Սիրունեան, սեղանաւոր, Մահմուտ—Փաշա, Եալըզ խանի դրան քով, Կ. Պոլիս։ 4—1

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնս. Սէրի Դ.	Օ. Ո.	27 $32^1/_2$
Ամէնէն բարձր գին	»	27 35
Ամէնէն վար գին	»	27 30
Ռումէլիի Երկաթուղի	ֆր.	110 75
Ամէնէն բարձր գին	»	111 25
Ամէնէն վար գին	»	110 50
Թրանսվալ	»	154 —
Ամէնէն բարձր գին	»	154 —

ԲԱՑՈՒՄ Մարտ 29/11 Ապրիլ

Օսմ. Քոնս. Սէրի Դ.	Օ. Ո.	27 $33^1/_2$
» » » » ժամ 6ին		27 $32^1/_2$
Ռումէլիի Երկաթուղի	ֆր.	110 75
» » ժամ 6ին		110 75
Թրանսվալ	ֆր.	156 —
Ռէժիի բաժնեթուղթ	Լ. Օ.	14 02
Թրամուէյ բաժնեթ.	դրչ.	582 $^1/_2$
» պարտաթ.	ֆր.	485 —
Տէրքոսի Ջուրի Ընկ.	»	275 —
Քարափ Կ. Պոլսոյ	»	479 —
Օսմ. Ապահովագր. Ընկ.	»	3 54
Եգիպտ. Քրէտի Ֆոնս.	»	267 50
Անատոլուի երկթ. պրտթ.	»	515 Գ.Կ.
» բժնթ.	Ա. Ո.	10 40

ՍԹԻԼԱՆՑ

Քոնսոլիտէ մէկ օրուան	Օ. Ո.	— 90
» ութ օրուան	»	2 45
Ռումէլիի Երկթղ. »	ֆր.	2 —

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 ֆրանքնոց	դրչ.	87 28
Անգլիական ոսկի	»	110 06
Բոլ Էմբէրիալ	»	90 20
Մէճիտիէ արծաթ	»	108 07
Քրիմից	»	51 06
Մէթալիք	»	101 20
Ռուպլ թղթադրամ	»	8 58

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

Լոնտոն 3 ամիս	դրչ.	109 $^1/_2$
» » » առտ. թղթ.	»	109 —
» չէք	»	110 08
Բարիզ 3 ամիս Պնք.ի թղթ.	ֆր.	23 —
» » » Առեւտ.	»	23 $07^1/_2$
» չէք	»	22 $82^1/_2$
Վիեննա չէք	քուրօն	21 80
Պէրլին չէք	մարք	18 60
Օտեսա չէք	ռուպլ	8 57

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, 10 Ապրիլ

Օսմ. Քոնս. Սէրի Բ.	Ա. Ո.	51 —
» » » Գ.		27 25
» » » Դ. բաց.	»	25 25
» » » Դ. գոց.	»	25 25
Օսմ. Կայս. Պանքա	»	12 12
Եգիպտական միացեալ	»	108 50
Անգլ. Քոնսոլիտէ	»	94 12
Այտընի Երկաթուղի	»	15 —
Փոխառութիւն Գասապա	»	84 —
» Հելլենական 1881	»	39 50
» » 1884	»	39 50
Մոնօփոլ »	»	42 50
Պուլկր. փոխառթ. 1888	»	83 —
» » Նոր 1892	»	83 50
Փոխան. Բարիզի վրայ	»	25 $32^1/_2$
Թրանսվալ	»	6 06
Դրամազեղչ		3 —

ԲԱՐԻԶ, 10 Ապրիլ

Օսմ. Քոնս. Սէրի Դ. բաց.	Ա.Ո.	25 80
» » » Դ. գոց.	»	25 80
» » » Գ.	»	27 80
Օսմ. Կայս Պանքա	ֆր.	555 —
Ռումէլիի Երկաթուղի	»	113 50
Ֆրանս. Ռանթ 3%	»	100 90
Քրէտի Լիոնէ	»	1031 —
Պանք տը Բարի	»	1020 —
Իտալական Ռանթ	»	100 57
Սպանիական արտաքին	»	79 10
Թրանսվալ	»	154 50
Չէք Լոնտոնի վրայ	»	25 165
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՊԷՐԼԻՆ, 10 Ապրիլ

Անատօլուի Երկաթուղի	»	102 50
Ռումէլիի Երկաթուղի	»	111 20
Օսմ. Քոնս. Սէրի Դ.		25 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 325
Դրամազեղչ		3 —

ՎԻԵՆՆԱ, 10 Ապրիլ

Փոխան. Բարիզի վրայ	քուրօն	95 40
» Լոնտոնի վրայ	»	240 10
Ռումէլիի Երկաթուղի	»	106 20
Օսմ. Ռէժի	»	289 —
Դրամազեղչ		3 $^1/_2$

ՔՕՆԵԱՔ ՊԱՐՊԱՐԷՍՍՕ Մ. ԵՂԲԱՐՑ

Պարպարէսսօ Մ. Եղբարց յունական քօնեաքը զուտ խաղողի արտադրութիւն է որուն ճարտարարուեստական հսկայ գործարանը հիմնուած է 1840ին և փոխանցուած է իրենց հօրմէն։

1875 և 1888ի յունական արուեստահանդէսը, 1889ի Բարիզի, 1894ի Շիքակոյի ամերիկեան, 1895ի Պորտօի և 1900ի Բարիզի մեծ արուեստահանդէսները միահամուռ հաստատած են որ Պարպարէսսօ Մ. Եղբարց ժառանգաբար պատրաստած քօնեաքը թէ՝ հին է թէ՝ ընտիր և ի հաստատութիւն՝ վարձատրած են պաշտօնական մրցանակներով։ Նոյնը կ՚հաստատեն նաեւ մեծահռչակ բժիշկներու և քիմիագէտներու վկայութիւնք։

Պարպարէսսօ Մ. Եղբարց քօնեաքին տրուած ուրիշ բազմաթիւ վկայագրերը աւելորդ է թուել, քանի որ հանրածանօթ է այն և սպառումը՝ առաջին աստիճանի, մրցակիցներուն նախանձը գրգռելու չափ։

) Արծաթ Խաչ Ս. Փրկչի
Մենաշնորհ-) Հայթայթիչ արքայական
եալ պատիւ) տան Ն. Վեհ. Յունաս-
) տանի Թագաւորին.

Ամէն յանձնարարութեան համար դիմել,
Առ Պ. ԱԹԱՆԱՍ Ս. ՔԱԼՕԽՐԻՍՕ
Ներկայացուցիչ Թուրքիոյ
Կ. Պոլիս. Կալաթա

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ — **ՆՈՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ**

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 14,732,680
ՀԱՍՈՅԹ 1900 ՏԱՐԻՈՅ 3,067,923

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 5,698,299
ՀԱՍՈՅԹ 1900 ՏԱՐԻՈՅ 1,233,070

Ընկերութիւնս իրենց Կ. Պոլսոյ Գործակալութեան միջոցաւ կ'ապահովագրէ ամէն կարգի ապահովագրութիւններ քնչելէ Հրդեհէ, ուսկի ապառիկ եւ ուսկի զիւրագին պայմանով ցած սակով ամէն ընկերութեանց տեղերը. բաղդատաբար այն բացառիկ ապահովութեան որ կ'ընծայեն իրենց գրամագլխոց մեծութեան եւ իրենց պահեստի միջոցաւ յաւելորդներեն առնուազն ...—Նաեւ իրը ապացոյց իրենց հաստատ ... թեան, միայն Հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ վճարած գումարն 36,000,000 Անգլ. Ոսկին կ'անցնի.

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

‘ՄԱՐԻԹԱՅՄ’

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 110,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ չափաւոր ... եւ ամենադիւրին պայմաններով ծովային նաւերն եւ ապրանքները խիստ ... Գնոց եւ այլոց վրայ տեղեկութիւն առնել ... կը հրաւիրուին դիմել Գալաթիա Մեհմէտ Ալի փաշա խան զետնայարկ Թիւ 21 եւ 22, կամ ... ԳԱՆԻԿ ՅՈՒՍԻՓԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ Վերոյիշեալ երեք Ընկերութեանց.

ԻՆՉ ԿԸՐՑՆԵՄ ՏՂԱԿԻՍ

Տղաք երբ հինգ վեց ամսուան ըլլան մայրերը անոնց լաւ սննդարար ուտելիք գտնելու հոգածութիւն կ'ըլլան, ինչ որ շատ բնական է, բայց որովհետեւ մայրական կաթը որչափ ալ առատ ու զօրաւոր ըլլայ, այլեւս անբաւական կ'ըլլայ Տղոց աճելու համար, երբ վեց ամսու ըլլան անոնք: Բարիզի ամէնէն հռչակաւոր բժիշկը Տքթ. Ֆօլիէն նկատողութեան առնելով այս կարեւոր խնդիրը, երկար փորձերէ ու զննութիւններէ վերջ, յաջողած է հնարել տղոց համար առաջին կարգի սնունդ մը, ՖՈՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՐ անուամբ, որ Բարիզի, Լոնտոնի եւ Վիեննայի Բժշկական Համալսարաններէն գնահատուելով, բոլոր քաղաքակիրթ աշխարհին մէջ ընդունուած է: ՖՈՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՐը շօքօլաի պէս խիստ քաղցրահամ է եւ միեւնոյն ժամանակ վերջին աստիճան սննդարար ու կազդուրիչ. մայրական կաթին կրկին անգամը սնունդ կ'պարունակէ, զոր ուտող տղաք կ'անանին, կ'ուժովնան, կ'աճին կ'կազդուրին, չուտով ոտքի կ'ելլեն եւ ատամներ հանելու ատենն ալ կ'դիմանան:

Հազարաւոր օրինակներ կ'ապացուցանեն որ Ֆոսֆաթին Ֆալիէռով մեծցող տղաք, քաջողջ, ուժեղ, զօրաւոր եւ կայտառ մարդիկ եղած են ապագային:

Ամէն հասակէ անձինք անհրաժեշտ է որ գործածեն այս սքանչելի սնունդը: Մանաւանդ ծերեր, հիւանդութենէ ապաքինողներ, ծծմայրեր ու նիհարներ, որոնց վերջին աստիճան պէտք է սնունդ եւ կորով կուտայ:

ՖՈՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՐը կը ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու մեծ դեղարաններու ու դեղի մթերանոցներուն մէջ. 26—14

ԶԱՐՄԱՑԱԾ ՄԻ ԱՆՑՆԻՔ

Արիւնը, ոսկորները, ջիղերը, ակռաները եւ մարդուս կազմուածքին ուրիշ մասերն որոշեալ քանակութեամբ ՖՈՍՖՈՐ կ'պարունակեն որ մարմնոյն առողջութիւնը պահպանելով անդամներուն կանոնաւորաբար աշխատելուն կ'օգնէ: Այս ֆոսֆորը որ թանկագին է մարդկային կազմուածքին համար, շատ անգամ կ'քիչնայ հիւանդութեանց պատճառով եւ այն անձն որ կորսնցուցած է մարմնոյն ֆոսֆորը, տեւական տկարութեանց կ'ենթարկուի: Արիւնը կ'տկարանայ, ջիղերը կ'թուլնան, ծունկերը կ'կտրուին ամբողջ մարմնոյն եւ գլխաւորաբար ուղեղին մէջ յոգնութիւն կ'զգացուի, սիրտը կ'տրոփէ եւ դեռ այս կարգի շատ մը անհանգստութիւններէ կը տառապի:

Կորսուած Ֆոսֆորը կրկին արեան մէջ մտցնելու եւ զայն զօրացնելու համար, բժիշկներ երբ հնար մը կ'խորհէին, այս տարի Բարիզի առաջնակարգ քիմիագէտներէն Պիլեօն Օ ՎՕ ԼԷՍԻԹԻՆ ՊԻԼԵՕՆ անուամբ դեղ մը հնարեց որ կորսուած ոյժը կատարելապէս կ'մտցնէ արեան մէջ, ջիղերը, ոսկորներն ու մարդուս կազմուածքը կ'զօրացնէ, եւ մարմնոյն զուարթութիւն կուտայ: Անոնք որ իրենց ուղեղն ու մարմինն յոգնեցուցած են, անոնք որ զեղծումներու պատճառով անկարողութեան մատնուած են եւ վերջապէս անոնք որ ոյժի պէտք ունին, անհրաժեշտ է որ Օ ՎՕ ԼԷՍԻԹԻՆ ՊԻԼԵՕՆ O vo-lécithine Billon առնեն: Օ Վօ Լէսիթին Պիլեօնն որ ամէնէն ազդու դեղն է շաքարախտին, ընդունուած է Ֆրանսայի բժշկական Ակադեմիէն եւ կ'ծախուի մեծ դեղագործներու ու դեղավաճառներու քով: 52—17

FER ET QUINQUINA

ՊՈՂՊԱՏ (ՖԷՐ) ԵՒ ՔԻՆՔԻՆԱ

Արդի բժշկութիւնը կ'խոստովանի որ տկարացած կազմուածքը զօրացնելու միակ միջոցը ՊՈՂՊԱՏ (ֆէր) եւ ՔԻՆՔԻՆԱՆ է:

Պողպատը կ'յանձնարարուի, որովհետեւ մեծ ազդեցութիւն ունի արեան վրայ եւ արեան մէջ որչափ շատ պողպատ գտնուի նոյնքան աւելի զօրաւոր է արիւնը: Իսկ մարդկային ընդհանուր կազմուածքին եւ գլխաւորաբար ստամոքսին վրայ քինքինայի ունեցած արտակարգ ազդեցութիւնը ծանօթ է ամենուն:

Մարդուս ընդհանուր կազմուածքը շատ անգամ տկարութեան կ'ենթարկուի, երբ ստամոքսը չկրնայ մարսողութիւնը կատարել կանոնաւորապէս: Աւելորդ է ըսել թէ, ստամոքսի տկարութիւնը երբ անխնամ ձգուի, ինչ յոռի հետեւութիւններ կ'ունենայ, գլխու ցաւ, ջերմ, մղձաւանջ, անկարողութիւն եւն. եւն.: Հետեւաբար շատ մը հիւանդութեանց առաջքն առնելու համար անհրաժեշտ է գործածել ՔԻՆԱ ԼԱՌՕՇԻ ՊՈՂՊԱՏԱԽԱՌՆ տեսակն որ արագաբար եւ հիմնապէս կը բուժէ սակաւարիւնութիւնը, ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆՆ եւ ընդհանուր տկարութիւնը: Այս դեղ անոր համար անհրաժեշտ է որ պատրաստուած է ՔԻՆԱՅԻ եւ ՊՈՂՊԱՏԻ զուտ հիւթէ:

ՔԻՆԱ ԼԱՌՕՇԻ բաղադրութիւնը բնաւ չհամեմատիր ուրիշ քինքինայով պատրաստուածներու, որոց ամէնէն գերըմտրելին է ու ամէնէն զօրացուցիչը կազդուրիչն ու վերանորոգիչը:

Եւրոպայի ամէնէն մեծ հիւանդանոցներ ու մեծահռչակ բժիշկներ երախտագիտութեամբ կ'գործածեն ՔԻՆԱ ԼԱՌՕՇԸ:

Թեթեւ տկարութեան եւ անարիւնութեան համար պէտք է գործածել Քինա Լառօշի պարզ տեսակն որ պողպատ պարունակեր:

Թէ պողպատախառն եւ թէ պարզ Քինա Լառօշը կ'գտնուի ամէն դեղավաճառի քով, կեղծերէն զգուշանալ: 26—21

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՋԵՐՄԱՄԻՋՈՒԹԻՒՆՆ

ու

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԿԸ ԲՈՒԺԷ


ՍԱՆԹԱԼ ՔԼԷՆ

Մէկ ճամբ օրական մէջ օգտակար 8—12 հատ խօրսիւլ առնելով:

ԲԻԼԻԻԼ ՄՈՒՍԼԻԹ — ԿԸ ԲՈՒԺԷ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՂ ՏԻԼԵՈՒ ՏԱԻՆ ...

ՀԱՑԸ ՀԱՃԵԼԻՔ, ԻՋՈՒԱԾՔԸ ԱՆԺՈՒԺՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՈՒԺԷ — ՍԻՐՕ Տ'ՕՊԼԻՐԺԻԷ

Կը ծախուի Բարիզ Բլէն եւ Ֆօմար փոխանառանի եւ Կ. Պոլսոյ ու գաւառներու դեղարաններու եւ դեղավաճառանոցներու մէջ:



ԳԵՐՄԱՆԵՒԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԳԻԾ

HAMBOURG-AMERICA ԵՒ DEUTSCHE LEVANTE LINIE

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆԻՒ-ԵՈՐՔԻ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԻՋԵՒ ՀԱՍՏԱՏԱԾ ՆՈՐ ԳԻԾԸ

ՍԷՐԻՖՕՍ	5,500	Թոնօ	Նիւ-Եորքէ	մեկնած	8	Փետր	Ն. Տ.	
ՍԻՍԻԼԻԱ	4,500	»	»	»	27	»	»	»
ՃՕՐՃԻԱ	4,950	»	»	պիտի մեկնի	20	Մարտ	»	»
ՄԻԼՕՍ	5,080	»	»	»	»	17 Ապրիլ	»	»

Նիւ-Եորքէ մեկնելով պիտի հանգչին Մալթա, Աղեքսանդրիա, Զմիւռնիա, Պոլիս, Նովորոսիսք եւ Օտեսա: Վերադարձին Պոլիս, Մարմարայի եզերքները, Բիրէա, Բաթրաս, Մալթա, Ալճէրիա եւ Նիւ-Եորք: Նպաստաւոր պայմաններով բեռ եւ ճամբորդ կ'ընդունին:

Deutsche Levante Linie Ընկերութիւնը բաց ի այն գծէն, Արեւելից կողմը կ'ըրկէ իր շոգենաւերը կանոնաւոր կերպիւ, ամէն 8—10 օրն անգամ մը Համպուրկ, ամէն 15 օրն անգամ մը Անվէրս, եւ ամիսն անգամ մը Նիւ-քասըլէ եւ Ռօթէրտամէ, Զմիւռնիայ, Պոլսոյ եւ Սեւ Ծովի համար:

Therapia, Stamboul եւ Pera շոգենաւք ամէն կարգի ճամբորդաց համար ընդարձակ սրահ, Ա. կարգի սեղան, ելեկտրական լոյս, բժիշկ եւ նուագախումբ ունին:

Դիմել Ընկերութեան կեդրոնը մանրամասնութեանց համար, ի Hambourg, կամ իրենց Գործակատարին ի Պանտրմա. Յ. Ս. ՄԻՍԻՐԵԱՆ եւ Ընկ. Հեռագիր. Missirian Panderma H. S. Missirian et Cie

ՀԱՅԹՈՒՍՏԻ ՄԷԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Գ. ԵՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պոլիս, Սուլթան-Համամ, Թօփալեան խան

Թօփալեան խանի վերջնալ մեծ վաճառատունը, որ հանդերձեղէնաց լաւագոյն ապրանքներուն է'ն նշանաւորն եղած է, բնաւ իր անունն եւ տեղը փոխած չէ, եւ իր տէրը Գ. Երմէնեան վաճառատան գործառնութեանց մէջ ա'լ աւելի կանոնաւորութիւն մտցուցած է:

Կ'ծանուցուի յաճախորդներուն թէ Թօփալեան խանի շրջականները զանազան անուններով եւ վերջերս բացուած հանդերձեղէնաց վաճառատունները Գ. Երմէնեան եւ Ընկ. վաճառատուներուն հետ ո եւ է յարաբերութիւն եւ կապակցութիւն չունին: Հետեւաբար յաճախորդները կ'հրաւիրուին դիմել Թօփալեան խանի վաճառատունը:

ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆԷՆ ԱԶԴԵՑԻԿ ԴԱՐՄԱՆԸ

Ամէն մարդ գիտէ որ ջղային հիւանդութիւնները կը ծնին գլխաւորաբար մարմնի ու մտքի չարաչար աշխատութենէ, յոգնութենէ, հեշտութէ եւ ամէն կարգի զեղծումներէ: Ջղային հիւանդութիւնները բուժելու համար մինչեւ ցարդ հնարուած դեղերն անբաւական եղած են իրենցմէ սպասուած արդիւնքն արտայայտելու, անոր համար որ վերոյիշեալ դեղերը ջիղերուն բնական ոյժը չկրնալով ներել ձեւով պատրաստուած են: Բարիզի առաջնակարգ բրոֆէսէօրներէն Պ. ԲՐԻՆԻԷ, վերջին տարիներս հնարած է դեղ մը ՆԷՕՐՕԶԻՆ ԲՐԻՆԻԷ անուամբ, որ ոչ միայն տկարացած ջիղերը կը զօրացնէ, այլ բնական ոյժէն զատ նոր ոյժ կուտայ անոնց, որովհետեւ ինչ նիւթերէ որ կազմուած են ջիղերը, ճիշտ մի եւ նոյն նիւթերով բաղադրուած է այս ՆԷՕՐՕԶԻՆ ԲՐԻՆԻԷն: Երիտասարդական կորով ստանալու եւ ջիղերուն ի'նչ աստիճան զօրացած ըլլալը հասկնալու համար, կը բաւէ փորձ մը ընել այս դեղէն:

Կէս գլխու ցաւը, ջղային հազը, երեսի ջիղերուն ցաւելը, անքնութիւնը, ջղային տկարութիւնը, դիւրագրգռութիւնը, սրտի բաբախումն, ոյժաթափութիւնն եւ ուրիշ այս կարգի հիւանդութիւնները հիմնապէս կը բժշկուին ՆԷՕՐՕԶԻՆ ԲՐԻՆԻԷով, որ կը ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու դեղարաններուն ու դեղի մթերանոցներուն մէջ: 52—24

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ

ԱՄԵՆԱՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զօրս փոխադարձ հիմնեալ 1845 ին

1902 Յունուար 1 ին երաշխաւորեալ գոյքն՝ Ֆր. 1,506,000,000.

1901ին ապահովագրեալներուն եղած փոխատուութիւնք՝ Ֆր. 34,000,000.

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ 600,000 էն աւելի ապահովագրեալ ունի, որք կ'կազմեն Ընկերութիւնը, եւ որոց կ'պատկանի բոլոր շահերն: 1901ին ապահովագրելոց վճարուած շահաբաժիններու գումարը՝ Ֆր. 17,500,000.

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔԻ տեղեկական բոլիսը մինչեւ հիմա ուրիշ որ եւ է ընկերութենէ մը յանձնուած բոլիսներէն աւելի անկաշկանդ եւ շահաւոր պայմաններութիւնն է, յանձնուած օրէն սկսեալ անվիճելի է, ըլլայ զբաղման, ճամբորդութեան, մահուան տեսակներուն եւ պատճառին, անձնապաշտութեան եւ մինչեւ իսկ պատերազմի առթին: Տեղեկական բոլիսը կ'երաշխաւորէ փոխատուութիւններ 3 տարի ապահովագին վճարելէ յետոյ առանց յետագայ ապահովագինն հաշուի առնելու, այս փոխատուութեանց գումարներն զատ զատ նշանակուած են բոլիսին մէջ. 30 օր պայմանաժամ իբրաքանչիւր վճարման համար առանց տոկոսի, վճարումները դադրեցնելէն մինչեւ 5 տարի վերստին շարունակելու առանձնաշնորհումն յետամնաց ապահովագինները 5 առ 100 տոկոսով հանդերձ վճարելով, մէկ տարեվճար ընելէ յետոյ իրաւունք կորուստ չկայ: Ապահովագրութեան երկարաձգումը բոլիսին մէջ նշանակուած ժամանակամիջոցի մը համար, այնպէս որ այդ ժամանակամիջոցին մէջ եթէ մահ պատահի, ապահովագրեալ գումարը կը հատուցուի ամբողջութեամբ, առանց հաշուի առնելու անվճար մնացած ապահովագինները:

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ 4 առ 100 տոկոսաբեր պայմանն ալ ունի, որ աշխարհի մէջ ցարդ գտնուած պայմաններէն ամէնէն աւելի նպաստաւորն է, աւելի մանրամասնութեանց համար դիմել

Տնօրէնութիւն ի Թուրքիա Ճ. ՈՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.

Թնիւք-Պատուիրակ Ա. ՉՈՒՀԱՃԵԱՆ

Պոլիս, Հուիթօլ խան

Վոյվոտա փողոց, Վիթալիս խան Ղալաթիա

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվէրփուլի եւ Միջերկրականի միջեւ բեռնաւոր շոգենաւեր

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Մարիօդիս	5000	Թէյպըր	3000
Ֆոյիւլ	4500	Ֆէրօս	3000
Նայդօքըլիս	4200	Օսմանլի	3000
Էմէյրիս	3500	Թիպա	2500
Լօմպարտ	3500	Կառնըօնի	1500
Միննա	3500	Նիլէ	1500
Էնքասթիս	3000		

Դիմել առ Ճ. Վ. Ուիթօլ եւ Ընկ. Ուիթօլ խան

ՃէՅՄՍ ՄՈՍ ԸՆԿ. 34. Ճէյմս Սթրիթ. Լիվէրփուլ

ԿԱՐՃ ԳՐԵԼ կ'ընդունուի գաւառի նամակագիրներէն. Շատ մը գրուածներ, որք թերեւս շահեկան լուրեր ու տեղեկութիւններ ալ պարունակեն, մէկ կողմ կ'նետուին՝ միայն երկարաբանութեան պատճառաւ: Զանց ընել խորհրդածութիւնները, բառի ու բացատրութեան կեղծութիւնը: ԿԱՐՃ ԵՒ ԿՏՐՈՒԿ. ա'ն է ալ ... Եւ ա'ն միայն կ'տպուի:

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ՕՐԱԳՐՈՅ Կ. Պոլիս, Nº 23, 25, Պապը Ալի Ճատտէսի

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (164)

ԹԱՐԳՄ. ՔՍԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԴԷՓԷՆ

ԴՐԱՄԻՆ ԶՈՀԵՐԸ

Գ. ՄԱՍ.— ԵՐԵՔ ՔՈՅՐԵՐԸ

Թ.

Բժիշկը, ձմեռնային պարտէզէն դուրս ելնելէ առաջ, մատին ծայրը դրաւ Մոսթակաքարեան ծաղիկի մը ամէնէն թարմ ճեղքերէն միոյն վրայ եւ կաթնային հեղուկէն կաթիլ մ'առնելով լեզուին վրայ դրաւ: Վայրկենապէս դառնութիւն մը զգաց հրաշէկ երկաթի մը այրուածքին հետ: Ի զուր թքաւ եւ լեզուն սրբեց թաշկինակով: Թէ' դառնութիւնն եւ թէ այրուածքը մնացին: Մատին ծայրն ալ սկսաւ այրիլ ու ցաւիլ եւ մորթը սեւ-սեւ կըտրեցաւ:—Ա'հ, իրաւ թոյն է եղեր, պոռաց: Ուրիշ ապացոյցի պէտք չունիմ: Այս տունկին անունն ի'նչ է:

—Ձեզ յիշեր. Գրքին մէջ գրուած է:

—Ո'ր գրքին:

—Այն մեծ գրքին որ վերն է ուրիշ նմանօրինակ գրքերու հետ, զոր Կոմսը կ'կարդար օր մը երբ Կոմսուհիին կողմէ գացի խնդրեցի իրմէ վար իջնել: Միւսիւ Կոմսն այս գիրքը կ'կարդար այնքան ուշադրութեամբ իբր թէ գոց ընել կ'ուզէր: Ա'հ, շատ աղուոր գիրք մ'է, եւ հետաքրքրական: Մէկէ աւելի անգամներ թղթատած եմ: Եթէ աստանկ չըլլար, բանէ մը պիտի չկասկածէի...:

Մաքսիմ, հետզհետէ աւելի յուզուած, երկրորդ յարկն ելաւ եւ մատենադարան գնաց Ժէնըվիէվի հետ:

Ժ.

Երեննուեայ մեծ սեղանը, որ մատենադարանի սենեկին կեդրոնական մասը կ'գրաւէր, լեցուն էր քարտէսներով, պատկերներով, եւ հին ու նոր ամէն տեսակ գիրքերով, որոց մէջ կը տեսնուէին այն հիւանալի հատորները, զոր Ռաուլ Բարիզէն բերել տուած էր իր քիմիին մէկ քմահաճոյքը գոհացնելու համար:

Հատորներէն մին բաց էր, եւ իր գունաւոր պատկերներուն կատարելութիւնն աչքի կ'զարնէր: Ժէնըվիէվ շիտակ սեղանին քով գնաց, գիրքն առաւ, քանի մը էջ դարձուց եւ մատը պատկերի մը վրայ դնելով ըսաւ Տօքթորին.—Դիտեցէ'ք, Միւսիւ, Օ'հ, պատկերը շատ կ'նմանի: Ես որ խեղճ տղէտ կին մ'եմ, մէ'կ տեսնալով ճանչցայ:

Մաքսիմ նայեցաւ, եւ ինք ալ ճանչցաւ այն տունկն որու հիւթը տակաւին կ'այրէր լեզուն ու մատը: Գրքին հեղինակը կ'բացատրէր տունկին թունաւորիչ հանգամանքն եւ թունաւորումին յատկանշող նշանները, եւ այդ թոյնը չէզոքացնելու համար Մաստակաքարի ընկերներուն գործածած միջոցները կ'մատնանշէր:—Միւսներն ալ պիտի գտնէք, ըսաւ Ժէնըվիէվ, եւ էջերը նորէն դարձնելով ցոյց տուաւ Հալէչաստանի եւ Ճավայի տունկերը: Ամէնքն ալ սոսկալի թոյն մը կ'պարունակէին: Մաքսիմ սարսափահար եղած էր: Ի զուր կ'փորձէր վանել իր մտքին վրայ իշխող զարհուրելի գաղափարը, որ յայտնի եղաւ իր առաջին խօսքերէն:—Ժէնըվիէ'վ, ըսաւ ցած ձայնով, երկար լռութենէ մը ետքը, գիտէ'ք թէ այս գիրքերը դղեակին մէջ կ'գտնուէին Մ. տը Կորսի մահուընէ առաջ:

—Ո'չ, չէին գտնուեր, պատասխանեց բարի կինն առանց վարանելու:

—Վստա'հ էք:

—Բացարձակապէս:

—Ինչո'ւ:

—Միւսիւ Կոմսը մարդ ղրկեց Օրլէանի կայարանը Բարիզէ եկած այս գիրքերն հոս բերելու համար: Ես աչքովս տեսայ ծրարն որ շատ ծանր էր: Ժիւստէն, Կոմսին առաջին սենեկապանը բացաւ ծրարը: Կ'տեսնէք, Միւսիւ Մաքսիմ, թէ չեմ կրնար սխալիլ:

—Այդ ըսածնիդ որչա'փ ժամանակ կայ:

—Սիրեցեալ տիրուհիիս հիւանդանալէն 15 օր կամ երեք շաբաթ առաջ էր:

Մաքսիմ նորէն սարսռաց: Զինք պատող խաւարը կ'լուսաւորուէր: Մարդասպանը ժամանակ կորսնցուցած չէր: Ոճիրն անհաւանական կ'երեւար, բայց մեծ յանցաւորներն երբեմն կ'գործեն այնպիսի յանդգնութեամբ, որ կ'փրկէ զիրենք, ամէն կասկածէ ազատ կացուցանելով:—Ժէնըվիէվ, ըսաւ Տօքթորը, ի'նչ պարագաներու մէջ ձեր ուշադրութիւնը սեւեռեցաւ տեղի ունեցած կասկածելի բաներուն վրայ:

—Ինծի կու գայ որ բարին Աստուած ձեռքէս բռնեց ու առաջնորդեց զիս, Միւսիւ Մաքսիմ, պատասխանեց սենեկապանուհին: Այն օրն ուր Միւսիւ Կոմսը կանչելու գացի տիրուհիիս կողմէ, հետաքրքրութեամբ այս պատկերներն որք հետաքրքրութիւնս արթնցուցին: Հետեւեալ օրը, երբ Մ. Կոմսը դուրս ելած էր եւ Օր. Ռընէ տիրուհիիս քովն էր, վեր ելայ այս պատկերները մօտէն դիտելու համար: Կարծեցի ճանչնալ քանի մը ծաղիկներ զոր նշմարած էի ջերմանոցներուն մէջ, վասն զի ծաղիկները կ'պաշտեմ ես: Ուզեցի ապահով ըլլալ եւ ձմեռնային պարտէզը գացի: Բնականաբար ճեղքերը տեսայ: Նախ զարմացայ, յետոյ մտահոգութեան մէջ ինկայ, որովհետեւ մ'իջեցի թէ այդ տունկերը, գրքին նկարագրութեան համեմատ, վտանգաւոր թոյներ կ'պարունակեն: Ասոր վրայ, երեւակայութիւնս սկսաւ գործել: Խորհեցայ Տիկին Կոմսուհիին վրայ եւ անոր տարօրինակ ու կնճռոտ հիւանդութեան վրայ, զոր ո'չ դուք ոչ Բարիզի ձեր պաշտօնակիցները չէին հասկնար: Մէկ խօսքով, ոճիրի մը գաղափարն անցաւ մտքէս, բայց ուսերս թօթուեցի հարցնելով ինքնիրենս թէ խե'նդ էի ի'նչ էի: Գաղափարը վանեցի: Գնաց, բայց նորէն եկաւ: Սկսաւ զիչեր ցերեկ հալածել զիս: Մեծցաւ, ահագին համեմատութիւններ առաւ: Դուլ ու դադար չտուաւ ինծի: Այնպէս որ' ա'լ չկրնալով համբերել, ձեզի իմաց տուի: Աղէկ ըրի, այնպէս չէ', Միւսիւ Մաքսիմ:

—Այո', աղէ'կ ըրիք, պատասխանեց Մաքսիմ:

—Դուք ալ իմ կարծիքէ'ս էք թէ ոճիր մը կ'գործուի, հարցուց Ժէնըվիէվ:

Երիտասարդը վարանեցաւ: Տարակոյս չկար որ բարի կնոջ համակարծիք էր, բայց չէր ուզեր յայտնի ընել, վախնալով որ Ժէնըվիէվ անխոհեմութիւն մը կ'գործէ: Նաեւ կ'ուզէր խորհրդածել, վերջնական որոշում մը տալէ առաջ: Ուստի պատասխանեց երկդիմի կերպով.— Կ'ուզէք գիտնալ թէ համակարծի'ք եմ ձեզի, բարի Ժէնըվիէվ: Անոր իմ պատասխանս.—Այո' եւ ո'չ:

Սենեկապանուհին անոր երեսը նայեցաւ զարմանքով:—Բիչ մ'առաջ ըսի ու նորէն կ'կրկնեմ թէ, շարունակեց երիտասարդը, այս տան մէջ անցած դարձածները խիստ կասկածելի են, Ոճիրին գոյութիւնը եթէ ոչ ստոյգ գէթ հաւանական կ'երեւայ ինծի դժբախտաբար, բայց այդ ոճիրն տնքամ հրէշային է որ անոր հաւատալու եւ մանաւանդ կարծեցեալ մարդասպանին դէմ դժխեմ ամբաստանութիւն մը ընելու համար նոր եւ աւելի լուրջ, աւելի համոզիչ ապացոյցներու պէտք ունիմ: Երեւոյթները ջախջախիչ են, կ'ընդունի'մ, բայց վերջապէս կարելի է սխալիլ: Որքա'ն անմեղներ դատապարտուած են սխալ երեւոյթներու վրայ: Կ'հասկնա'ք, Ժէնըվիէ'վ:

—Այո', Միւսիւ Տօքթոր: Սակայն գի'րքը..., ճեղքե'րը, թոյնե'րը, Տիկին Կոմսուհիին յուսահատ վիճա'կը...: Ասոնք ամէնն ալ իրական են:

—Շատ իրական, աւա'ղ: Ոճիրն ընդունելի է, բայց ոճրագործն ո'վ է: Ձենք գիտեր: Պէտք է աշխա'տ գիտնալ: Արդ, այս նպատակին համնելու համար, դուք կրնաք օգտակար ըլլալ ինծի:

—Հրամա'ն ըրէ'ք: Պատրաստ եմ, ի'նչ ընելու է:

—Իմ վրաս վստահութիւն ունի'ք, չէ', Ժէնըվիէ'վ:

—Ինչպէս Աստուծոյ վրայ, ըսաւ բարի կինը: Միթէ ձենէ զատ ուրիշի մը կ'յայտնէի այս գաղտնիքը:

—Տուած խորհուրդներուս պիտի հետեւի'ք:

—Ձեր բոլոր հրամաններուն պիտի հնազանդիմ:

—Լաւ ուրեմն: Նախ մարդու բան մ'ըսէք այս խնդրոյն վրայ:

—Այդ մասին վախ չկայ: Արդէն, ինչպէս տեսաք, կ'վարանէի, կ'վախնայի թէ խենդ կ'կարծէք զիս:

—Այնպէս ցոյց տուէք որ կասկած մը կամ անվստահութիւն մը չունիք: Վերջապէս, այս սոսկալի գիւտէն առաջ ինչպէս որ էիք, այնպէս եղէ'ք:

—Բայց, Տօքթո'ր, կակազեց խեղճ կինը, չեմ կրնար թողուլ որ աչքիս առջեւ թունաւորեն Տիկին Կոմսուհին: Ամէն անգամ որ գաւաթ մը բուսաջուր կամ դգալ մը դեղաջուր տրուի Օր. Ռընէի կամ իմ ձեռքով, բոլոր մարմնովս պիտի դողամ հարցնելով ինքզինքս թէ վերջին հարուածը չէ' արդեօք որ կ'տրուի իրեն:

—Այդ մասի'ն հոգ մի' ընէք, բարի Ժէնըվիէվ: Ես նախզգուշութիւններ ձեռք առած եմ: Դո'ւք կ'պատրաստէք դեղաջուրերն ու բուսաջուրերը:

—Այո', Տօքթո'ր:

—Միշտ առանձի'ն:

—Օր. Ռընէ երբեմն կ'օգնէ ինծի, բայց շատ քիչ:

—Դղեակին ծառանե'րը:

—Երբե'ք:

—Դեղարանին դուռը սովորաբար բա'ց է:

—Ո'չ, բայց բանալին վրան է: Ուղղը կրնայ մտնել: Վերցնե'նք:

—Հարկ չկայ: Ամէն բան իր հոգւոյն վիճակին մէջ ձգեցէք: Պատրաստուած դեղաջուրերն ո'ւր կ'դնէք:

(Շար.) Թարգմ. Ժ. ՇԻՐԱԿԱՑԻ

ՁԵՌՔԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ.—Լրագրավաճառներէ ոմանց թերթ տալը դադրեցուած ըլլալով, կ'խնդրենք ձեռքէ գնողներէն որ ծխավաճառներէ կամ ուրիշ լրագրավաճառներէ գնեն իրենց թերթերը: